

291.99.092214
C-16



ԳԱՔՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆՑ

(Ծննդյան հարյուրամյակի առթիվ)

ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐ

1925 թ. հունիսի 29-ին լրացավ մեր հայտնի թատերագիր Գաբրիել Սունդուկյանի ծննդյան հարյուրամյակը:

Ի նկատի առնելով այն, Վոր մեր գրականագետների մեջ կարող են գտնվել այնպիսիները, վորոնք կուզենան, գուցե, այդ առթիվ գրել քան-քարավոր թատերագրի լիակատար կենսագրությունը նրա թողած յերկերի մանրամասն գնահատականով, վոր մինչև ցայսօր տակավին կատարված չէ, մենք ավելորդ չենք համարում այստեղ հանդես բերել նրան վերաբերյալ փաստական տվյալներ Պետական Թանգարանում պահված վավերականների հիմունքով, վորով կարծում ենք, մի կողմից ծանոթացրած կըլինենք մեր ընթերցողների լայն խավերը հանդուցյալի թեև համառոտ, բայց ստույգ կենսագրության, մյուս կողմից ել գյուրություն ընծայած կըլինենք նրա մասին ընդարձակ ուսումնասիրություններ պատրաստողներին:

Գաբրիել Սունդուկյանցը, վոր յուր աշակերտություն որերով յուր ազգանունը գրել է և «Սանդուկյանց» և «Սունդուկով», ծնվել է Թիֆլիսի Անչիս-Պաթի տաճարի թաղում, վորտեղ վրաց արքաներն եյին նստում և վորտեղ կառուցված եյին նրանց պալատները: Նա ծնվել է 1825 թվի հունիսի 29-ին և մկրտվել է Ս. Նշան յեկեղեցում Տեր-Ստեփանոս քահանայի ձեռքով վրացի Դավիթ Սուլթանովի կնքահայրությամբ:

Ծննդյան վկայականի մեջ նրա ծննդյան ամիսն ու ամսաթիվը նշանակված է ոգոստոսի 1-ը, վոր սակայն ուղիղ չէ. թանգարանում նրա գրքերի մեջ պահված է Մխիթարյանների 25 թվի որացույցը, վորի մեջ հանգուցյալի ձեռքով ընդգծված է հունիսի 29-ը թիվը և տակը լուսանցքի վրա ծանոթաբանված. «Իմ ծննդյան օրը», վորով յեվ հաստատվում է, վոր նա ծնվել է վոչ թե ոգոստոսի 1-ին, այլ հունիսի 29-ին:

Նրա հոր անունը յեղել է Մկրտում, վոր սերած է յեղել Թիֆլիզի «մոքսլաքական» ընտանիքից, վոր շատ հին հայ մոքսլաքների հետ միասին բնակելիս է յեղել Անչիս-Պաթի թաղում, մոքսլաքների, վորոնց շառավիղներիցն են յեղել Զիմզիմովները, վորոնց հավաքական տիպարները նա

ՀԱՅԳՈՂԻԳՐԱՖԻ Զ-ՐԴ ՏՊԱՐ.
ՊԱՏՎԵՐ № 4059.
ԳՐԱՌ. № 139 (բ) ՏԻՐԱԺ 50.

դուրս ե բերել յուր պիլյաներում ի գեմս յուր Պեպոյ-ի «Արուսիան Զիմզի-մովի»:

Սունդուկյանցը յերկու անգամ ծննդյան վկայական ե ստացել. առաջին անգամ նրան վկայական ե տրվել 1846 թվին հունիսի 3-ին, յերկրորդ անգամ — 1852 թ. գեկտեմբերի 12-ին: Առաջինի մեջ նրա հոր անունը թարգմանված ե յեղել ուսերեն «Мкртумов сын Сундукков»: Նա այդպիսի թարգմանությունը համարել ե անկանոն ե 1852 թ. խնդրամատուց ե յեղել Կոնստանտին տալու իրեն նոր վկայական, վորի մեջ իր հոր անունը թարգմանված լինի այսպես. «Что он сын Никиты Сундукянца, Тифлисского гражданина», վոր յեվ կատարել ե Կոնստանտինը:

1840 թվի մայիսի 3-ին նա ստացել ե Վրաստանի բժշկական վարչությունից ծաղկի պատվաստի վկայական, վորի մեջ ասված ե, վոր նա պատվաստված ե ու պատվաստը ունեցել ե հարկավոր ներգործությունը ե վոր Սունդուկյանցը առողջ կազմվածքի տեր ե:

Սունդուկյանցի մոր անունը հիշված ե Թինաթինա (Ռոտինյանց), վոր, ինչպես յերեվում ե, նրա իսկական անունը չի յեղել. նրա մոր իսկական անունը յեղել ե Թեկղի: Հանդուցյալի թղթերի մեջ պահված ե մի դարգարուն տետրակ, վորի մեջ յուր Սունդուկյանցի ձեռքով գրված ե մի անարվեստ, անպաճուճ մանկական-աշակերտական գրաբառ վտանավոր, նվիրված մորը. դրա մեջ նա կոչված ե «Խնամակալ ու բարեպիտ տիկին Թեկղի»:

Նրա մայրը յեղել ե նրա ե նրա յեղբոր ու քրոջ համար խնամակալ ու բարերար, վորովհետև նրանք վաղ զրկվել են հորից ե սնվել ու մեծացել մոր խնամքի տակ: Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել այդ վտանավորը, վոր կրում ե «Յարգանք տարեմտական առ պատուելի մայրն մեր» խորագրերը ե գրված ե նոր տարու առթիվ 1838 թ., այսինքն, Սունդուկյանցի 13 տարեկան հասակում, ե արտահայտում ե նրա այն բուռն մանկական սերը, վոր նա այդ վաղ ժամանակներում դեռ տածել ե իր մոր հանդեպ: Այդ վտանավորը, վոր նա նույն տետրակում թարգմանել ե ե Փրանսերեն — «Compliment du jour de l'an 1838» խորագրով, նույն ժամանակ նրա 1837 թ. գրած դույն որինակ ու դույն բովանդակությամբ մյուս վտանավորի հետ միասին ե նրա առաջին գրվածքն ե: —

Ըզմուտ շրջանի սոյն նորոգ տարւոյ,
Շնորհաւորեմք մօրդ մեր սիրելւոյ,
Ես ե եղբայր իմ ե փոքրիկ մեր քոյր
Աս Տիրուհիդ մեր մատչիմք ի համբոյր:
Խնամակալ մեր՝ դու Թեկղի տիկին,
Ով ծնող անձանցս՝ սնուցիչ անդին,
Ընկալ ըզնուէր մերոյ սերտ սըրտի
Խոստանամք լինել քեզ հլու որդի,
Յանկալով կենացդ մերոյ կենսատուի,
Կատարելով զկամս մօրդ բարերարի:

Վոր Սունդուկյանցը վաղ ե զրկվել հորից, այդ յերեվում ե նրա հոր

Հարությունի վորդի Մկրտումի վտանավոր տապանագրից, վորի որինակը պահպանվել ե նրա թղթերի մեջ:

«Յամի Տեառն 1831 ՚ի Մայիսի 22.
Ի սոյն դամբարան ամփոփեալ զընի
Մարմին բարեպաշտըն Մկրտումի,
Որդույ Յարութեան Սանդուկեանց ձայնեալ,
Ի Տիխեաց աստի վաճառականի:
Սորա ոչ երկարեալ զիւր կեանս աշխարհի,
Մանգաղաւ մահու տարաժամ հընձի
Ի քառասներորդ ե իններորդում
Ամի ե կինաց իւրում հասակի,
Թողլով որբս յերկրի՝ զմատաղատի,
Զերիս զիւր զաւակս ե զիւր այրի,
Խնդրէ արդ յորոց աստէն հանդիպին
Յիշել զինքն ի տէր՝ ասել ողորմի»:

Նա, ուրեմն, յուր հորից հետո վորք ե մնացել յուր վեց տարեկան հասակում ե մայրն ե յեղել, վոր հոգացել ե նրա կրթության մասին, չլընայելով դրա համար ե վոչ մի բան ե տալով նրան ժամանակի ամենափայլուն դաստիարակությունն ու կրթությունը:

Յուր սկզբնական կրթությունը նա ստացել ե իրանց տանը ապրող հայտնի Յեղեսացի Հակոբ Շահան-Ջրպետից ե նրա Պարիզցի Փրանսուհի կնոջից, վորոնց մոտ նա սովորել ե 1832 ապր. 1-ը — 1838 թ. սեպտ. 1-ը, մինչև Ջրպետի մահը, ամեն որ հաճախելով նրանց բնակարանը ե մնալով առավոտ ժամը 8-ից մինչև յերեկոյան վեցը: Նրա թղթերի մեջ պահպանվել ե Ջրպետի տապանագրի Փրանսերեն որինակը յեվ դրա հայերեն թարգմանությունը, վորից յերեվում ե, վոր նրա առաջին վարժապետի մահը պատահել ե 1838 թ. ոգոստոսի 16-ին, յերբ սա յոթնասուն տարեկան ծերունի յե յեղել: Յեթե ի նկատի առնենք, վոր նա սկսել ե սովորել յուր վեց տարեկան հասակում, կրպարովի ուրեմն, վոր նրա կրթությունն ու դաստիարակությունը Շահան Ջրպետի մոտ տեղել ե վեց տարի շարունակ ե տվել ե շատ հաջող արդյունք, կապելով աշակերտին յուր դաստիարակների հետ սիրո յեվ յերախտագիտության զգացմունքով: Բացի հիշյալ տապանագրից, Սունդուկյանցի թղթերի մեջ պահպանվել ե Շահան Ջրպետից նրա ձեռքով գրված ե մի ձեռագիր տետրակ «Յերկրաչափություն» խորագրով, վորի վրա, ինչպես յերևում ե, նա դաս ե առել Ջրպետից ե նրա մահից հետո յել նա պահել ե յուր թղթերի մեջ իրրև հիշատակ: Յերկրաչափությունը, ինչպես յերևում ե, նրա սիրած առարկան ե յեղել: Հայտնի յե, վոր նա մի կարճ ժամանակ ձրի վարժապետություն ե արել Ներսիսյան Դպրանոցում, զասավանդելով այդ առարկան բարձր դասարանի աշակերտներին:

Այստեղ ավելորդ չենք համարում մեջ բերել Ջրպետի Փրանսերեն տապանագիրը, վորի հայերեն թարգմանությունն ել յուր, Սունդուկյանցի, ձեռքով ե կատարված ե պահված դարձյալ ի հիշատակ —

«Ci-git Jacques Chahan de Cirbied professeur d'arménien à l'école Royale et spéciale des langues orientales de France et membre de plusieurs accadémies né à Edessa décédé à Tiflis le 16 août 1838 âgé de 70 ans monument posé par son épouse éplorée» —

«Աստ ամփոփեցաւ մարմին Յակոբայ Շահան Զրպետեանի յեղեսացւոյ, դասատուի Հայկարանութեան և Արևելեան լեզուաց յարքունի և ի մասնաւոր դպրոցս Գաղղիոյ և անդամոյ բազում ուսումնական ճամբարտակաց. որ յանդեաւ ի Տփլիսի 16 օգոստոսի 1838 ամի 70 ամեաց հասակի կենաց: Տապանս այս կանգնեցաւ յորբալի կնոջէ առնա այտորիկ»:

Հայերեն լեզուն և, շատ ուշ, լատիներենն ու իտալերենը նա սովորել է Զրպետից, ուսերենը Ա. Արարատյանից և հայ կաթողիկ Մամուլովից, իսկ ֆրանսերենը նրա կնոջից — Մարգարիտ Վոնլատումից (Marguerite Wonlatum), վոր մի գտարյուն ֆրանսուհի յե յեղել, ծնված Դենիզում, բայց սնված ու մեծացած Պարիզում:

Սունդուկյանցը Պարիզի Արևելյան լեզուների դպրոցի ուսուցչապետ Ֆրեդերիկ Մակլերին (Frédéric Macler) 1909 թ. հոկտեմբերին յուր մասին ուղարկած կենսագրական ծանոթյունների մեջ, ի միջի այլոց, հիշում է և այն, թե ինքը ինչպես է սովորել ֆրանսերեն:

«Յես մինչև ցայտոր ել զեռ լավ հիշում եմ այն բոլորները», գրում է նա այդ ծանոթությունների մեջ, «յերբ նստած նրա (ուսուցչուհու) աջ կողմը, վանկ կապելով կարգում եյի՝ «b-l-a-bla»: Նա այնքան պատմել եր ինձ Պարիզի մասին, վոր յես, յերբ 1878 թ. պատեհ ժամանակ գտա լինել Պարիզում ու տեսնել այդ փառավոր քաղաքը ու նրա ցուցահանդեսը, ինձ այնպես թվաց, վոր յես շատ ծանոթություն ունիմ այն բոլոր տեղերի մասին, վոր առաջին անգամն եյի տեսնում: Բայց այնու ամենայնիվ յես հիացա այդ տիեզերական քաղաքի բարեմասնություններով և հոյակապությամբ:

Նույն իսկ որը, յերբ ժամանեցի Պարիզ, յես բարձրացա Հաղթանակի կամարը (l'arc de triomphe) և Վանդոմի սյունը (la colonne de Vendome), և այդտեղից մեկնելուս որը յես մնաս բարև ասացի Պարիզին, յեղնելով Ս. Հակոբա աշտարակը (la tour St-Jacques): Ինչպես բաղաձուր պիտի համարեն իրանց ֆրանսիացիք, վոր Պարիզը պատկանում է իրանց, վոր նրանք կարող են պարծենալ իրանց քաղաքակրթությամբ:

Յես յերբեք չեմ մոռանալ այն բոլորները. յերբ յես 1878 թ. ներկա գտնվեցա Պարիզի ֆրանսիական թատրոնում Fourchambaul-ի 54-րդ ներկայացմանը, վորտեղ խաղում եյին Տիկին Ագարը, Պ. Կոքլինը և մյուսները»...

Զրպետի մահից հետո նա յուր կրթությունը շարունակել է Արզանյան յեղբայրների պանսիոնում — «Благородный пансион кандидатов Арзановых»:

Արզանյանները ավարտած լինելով իրենց ուսման ընթացքը Լազարյան ճեմարանում, իրենց պանսիոնն ել կազմակերպել եյին ճեմարանի որինակով ու կարգերով: Այդտեղ մյուս առարկաների շարքում դասավանդվում եյին և լատին ու ֆրանսերեն լեզուները:

Իրբև հիշատակ նրա Արզանյանների պանսիոնում սովորած լինելուն, պահպանվել է նրա թղթերի մեջ նրա այդ ժամանակվա աշակերտական տետրակներից մեկը Արզանյան յեղբայրներից մեկի մակագրությամբ և նրան պանսիոնից արված վկայականը «Attestat», վորից յերևում է, վոր նա մտել է պանսիոն 1838 թվին, այսինքն Զրպետի մահից հետո, և ավարտել է այդտեղ յուր ուսման ընթացքը 1840 թ. հունվարին, յուր 15 տարեկան հասակում, և որինակելի վարքի տեր է յեղել:

Դույն 1840 թվին նա մտել է գիմնազիոն, վորտեղ նա սովորել է մինչեվ 1846 թիվը, յերբ նա հաջողությամբ ավարտել է յուր միջնակարգ ուսման ընթացքը: Պահպանվել են և նրա գիմնազիոնական աշակերտական տետրակները, և 1845 թվի նոյեմբերի 4-ին նրան արված գովասանական թերթը, վորի մեջ ասված է, վոր թերթը արված է Թիֆլիզի գիմնազիոնի վեցերորդ դասարանի աշակերտ Գարբիել Սունդուկյանցին: Ասել է թե նա այդտեղ գիմնազիոնումն ել, ինչպես Զրպետի մոտ և Արզանյանների պանսիոնում, սովորել է գովանի վարքով ու հառաջադիմությամբ:

1846 թվի օգոստոսին նա գնացել է Պետերբուրգ ու նույն ամսի 20-ին մտել է Կայսերական համալսարանը ու գրվել ուսանող Լեզվաբանական բաժնի Արևելյան ճյուղի, վորի լիակատար դասընթացքը նա ավարտել է 1850 թ. յուր 25 տարեկան հասակում, ստանալով արևելյան լեզուների կանդիդատի զիտական աստիճան (Տես գրպլում 1850 նոյեմբերի 23):

Ավարտելուց հետո, նա վերադարձել է Թիֆլիզ ու հաջորդ 1851 թ. փետրվարի 24-ին մտել է ծառայության փոխարքայի դիվանատունը բանավոր թարգմանի պաշտոնով ու նույն թվին կարգվել է բաժնի վարչի ոգնական — «Помощник столоначальника»: Յերեք տարուց հետո, 1853 թ. դեկտեմբերին, նա փոխարքայի հրամանով դատվել է Դերբենտի գինվորական նահանգապետի դիվանատան աստիճանավորների շարքը և ստիպված է յեղել մեկնել Դերբենտ, իսկ հաջորդ 1854 թվին կարգվել է նույն դիվանատան գործավար (Տես Յուեցակ ծառայության 1858 թ. հունվարի 25):

Նրա Դերբենտ փոխադրվելը յեղել է վոչ յուր կամքով, այլ իշխանության հրամանով, իրբև պատիժ: Նրա թղթերի մեջ պահված է յերկու խնդրագիր — մեկը յուր անունից, մյուսը՝ մոր, այրի Թինաթինայի, վորոնցից պարզվում է, վոր նրա ծառայության յերրորդ տարին, 1853 թ. հունիսին, տեղի յե ունեցել նրա և դիվանատան գանձապահ Բելլայի մեջ ընդհարում: Գանձապահը անվայել և ծանր խոսքերով անպատվել է նրան և նա ել փոխադարձաբար պատասխանել է, վորի համար և գանձապահը պահանջել է դիվանատան վերատեսուչ Շչերբինից, վոր Սունդուկյանցը հրապարակորեն ներումն խնդրի իրանից: Սակայն վերատեսուչը ի նկատի առնելով կատարված ընդհարման հանգամանքները, բավականացել է նրան դիվանատան մեջ տնային կալանքի յենթարկելու պատժով:

Այդ պատիժը սակայն չի բավարարում գանձապահին. նա այնպես է անում, վոր յոթ ամսից հետո, նույն թվին դեկտեմբերին, Սունդուկյանցը ստիպված է լինում բարձր իշխանության հրամանով փոխադրվել 24 ժամ-

«Ci-git Jacques Chahan de Cirbied professeur d'arménien à l'école Royale et spéciale des langues orientales de France et membre de plusieurs academies né à Edessa décédé à Tiflis le 16 août 1838 âgé de 70 ans monument posé par son épouse éplorée»—

«Աստ ամփոփեցաւ մարմին Յակոբայ Շահան Զրպետեանի յերեսացւոյ, դասատուի Հայկաբանութեան և Արեւելեան լեզուաց յարքունի և ի մասնաւոր դպրոցս Գաղղիոյ և անդամոյ բազում ուսումնական ճամբարտակաց. որ յանդեաւ ի Տփլիսի 16 օգոստոսի 1838 ամի 70 ամեաց հասակի կենաց: Տապանս այս կանգնեցաւ յողբալի կնոջէ առնս այսորիկ»:

Հայերեն լեզուն և, շատ ուշ, լատիներենն ու իտալերենը նա սովորել և Զրպետից, ուսեւերենը Ա. Արարատյանից և հայ կաթողիկ Մամուլովից, իսկ ֆրանսերենը նրա կնոջից—Մարգարիտ Վոնլատումից (Marguerite Wonlatum), վոր մի գտարյուն ֆրանսուհի յե յեղել, ծնված Դենիզում, բայց սնված ու մեծացած Պարիզում:

Սոււղուկյանցը Պարիզի Արեւելյան լեզուների դպրոցի ուսուցչապետ Ֆրեդերիկ Մակլերին (Frédéric Macler) 1909 թ. հոկտեմբերին յուր մասին ուղարկած կենսագրական ծանոթյունների մեջ, ի միջի այլոց, հիշում է և այն, թե ինքը ինչպես է սովորել ֆրանսերեն:

«Յես մինչև ցայսօր ել զեռ լավ հիշում եմ այն ըրպենները», գրում է նա այդ ծանոթությունների մեջ, «յերբ նստած նրա (ուսուցչուհու) աջ կողմը, վանկ կապելով կարգում էյի՝ «b-l-a—bla»: Նա այնքան պատմել էր ինձ Պարիզի մասին, վոր յես, յերբ 1878 թ. պատեհ ժամանակ գտա լինել Պարիզում ու տեսնել այդ փառավոր քաղաքը ու նրա ցուցահանդեսը, ինձ այնպես թվաց, վոր յես շատ ծանոթություն ունիմ այն ըրոր տեղերի մասին, վոր առաջին անգամն էյի տեսնում: Բայց այնու ամենայնիվ յես հիացա այդ տիեզերական քաղաքի բարեմասնություններով և հոյակապությամբ:

Նույն իսկ որը, յերբ ժամանեցի Պարիզ, յես բարձրացա Հաղթանակի կամարը (l'arc de triomphe) և Վանդոմի սյունը (la colonne de Vendome), և այդտեղից մեկնելուս որը յես մնաս բարե սասցի Պարիզին, յեկնելով Ս. Հակոբա աշտարակը (la tour St-Jacques): Ինչպես բազմավոր պիտի համարեն իրանց ֆրանսիացիք, վոր Պարիզը պատկանում է իրանց, վոր նրանք կարող են պարծենալ իրանց քաղաքակրթությամբ:

Յես յերբեք չեմ մոռանալ այն ըրպենները. յերբ յես 1878 թ. ներկա գտնվեցա Պարիզի ֆրանսիական թատրոնում Fouchambaul-ի 54-րդ ներկայացմանը, վորտեղ խաղում էյին Տիկին Ագարը, Պ. Կոքլինը և մյուսները»...

Զրպետի մահից հետո նա յուր կրթությունը շարունակել է Արգանյան յեղբայրների պանսիոնում—«Благородный пансион кандидатов Арзановых»: Արգանյանները ավարտած լինելով իրենց ուսման ընթացքը կազարյան ճեմարանում, իրենց պանսիոնն ել կազմակերպել էյին ճեմարանի որինակով ու կարգերով: Այդտեղ մյուս առարկաների շարքում դասավանդվում էյին և լատին ու ֆրանսերեն լեզուները:

Իրբ հիշատակ նրա Արգանյանների պանսիոնում սովորած լինելուն, պահպանվել է նրա թղթերի մեջ նրա այդ ժամանակվա աշակերտական տետրակներից մեկը Արգանյան յեղբայրներից մեկի մակագրությամբ և նրան պանսիոնից տրված վկայականը «Attestat», վորից յերևում է, վոր նա մտել է պանսիոն 1838 թվին, այսինքն Զրպետի մահից հետո, և ավարտել է այդտեղ յուր ուսման ընթացքը 1840 թ. հունվարին, յուր 15 տարեկան հասակում, և որինակելի վարքի տեր է յեղել:

Դույն 1840 թվին նա մտել է գիմնազիոն, վորտեղ նա սովորել է մինչև 1846 թիվը, յերբ նա հաջողությամբ ավարտել է յուր միջնակարգ ուսման ընթացքը: Պահպանվել են և նրա գիմնազիոնական աշակերտական տետրակները, և 1845 թվի նոյեմբերի 4-ին նրան տրված գովասանական լիերթը, վորի մեջ ասված է, վոր թերթը տրված է Թիֆլիզի գիմնազիոնի վեցերորդ դասարանի աշակերտ Գարբիել Սոււղուկյանցին: Ասել է թե նա այդտեղ գիմնազիոնումն ել, ինչպես Զրպետի մոտ և Արգանյանների պանսիոնում, սովորել է գովանի վարքով ու հառաջադիմությամբ:

1846 թվի ոգոստոսին նա գնացել է Պետերբուրգ ու նույն ամսի 20-ին մտել է Կայսերական համալսարանը ու գրվել ուսանող Լեզվաբանական բաժնի Արեւելյան ճյուղի, վորի լիակատար գասընթացքը նա ավարտել է 1850 թ. յուր 25 տարեկան հասակում, ստանալով արեւելյան լեզուների կանդիդատի զիտական աստիճան (Տես զիպլում 1850 նոյեմբերի 23):

Ավարտելուց հետո, նա վերադարձել է Թիֆլիզ ու հաջորդ 1851 թ. փետրվարի 24-ին մտել է ծառայության փոխարքայի զիվանատունը բանավոր թարգմանի պաշտոնով ու նույն թվին կարգվել է բաժնի վարչի ուղնական—«Помощник столоначальника»: Յերեք տարուց հետո, 1853 թ. դեկտեմբերին, նա փոխարքայի հրամանով դասվել է Դերբենտի զինվորական նահանգապետի զիվանատան աստիճանավորների շարքը և ստիպված է յեղել մեկնել Դերբենտ, իսկ հաջորդ 1854 թվին կարգվել է նույն զիվանատան գործավար (Տես Յուցակ ծառայության 1858 թ. հունվարի 25):

Նրա Դերբենտ փոխարքայի յեղել է վոչ յուր կամքով, այլ իշխանության հրամանով, իրբ պատիժ: Նրա թղթերի մեջ պահված է յերկու խնդրագիր—մեկը յուր անունից, մյուսը՝ մոր, այլի Թինաթինայի, վորոնցից պարզվում է, վոր նրա ծառայության յերրորդ տարին, 1853 թ. հունիսին, տեղի յե ունեցել նրա և զիվանատան գանձապահ Բելյայեվի մեջ ընդհարում: Գանձապահը անվայել և ծանր խոսքերով անպատվել է նրան և նա ել փոխադարձաբար պատասխանել և, վորի համար և գանձապահը պահանջել է զիվանատան վերատեսուչ Շչերբինից, վոր Սոււղուկյանցը հրապարակորեն ներումն խնդրի իրանից: Սակայն վերատեսուչը ի նկատի առնելով կատարված ընդհարման հանգամանքները, բավականացել է նրան զիվանատան մեջ տնային կալանքի յենթարկելու պատժով:

Այդ պատիժը սակայն չի բավարարում գանձապահին. նա այնպես է անում, վոր յոթ ամսից հետո, նույն թվին դեկտեմբերին, Սոււղուկյանցը ստիպված է լինում բարձր իշխանության հրամանով փոխարքայի 24 ժամ-

վա ընթացքում Դերբինստ գինվորական հասանգապետի գիվանատունը, իբրև հանդուգն և վատ վարքի տեր անձն. թեև զրանից առաջ նա քանիցս նույն իշխանության կողմից վկայվել ու վորակվել էր, իբրև որինակելի վարքի տեր աստիճանավոր:

Այսպիսով նա միեւնույն հանցանքի համար յենթարկվում է պատժի յերկու անգամ, առաջին անգամ՝ կալանքի, յերկրորդ անգամ՝ պաշտոնազրկության և քարտրի: Ապագայում, թեև ներվում է նրան այդ հանցանքը, բայց այնուամենայնիվ չի իմացվում, թե ի՞նչպես, ի՞նչ միջոցներով էր գտնաւապահ Բելյայեվը հասել յուր վառասիրության այդպիսի յեղանակով հազուրդ տալու նպատակին:

Թինաթինա Սունդուկյանցի ինդերագրից պարզվում է մեզ համար և մի ուրիշ կարևոր հանգամանք, — վոր նա, Թինաթինան, հայերեն գրել կարողալ չի իմացել, և խնդրագիրը, վոր գրվել ու մատուցվել է փոխարքա Բարյատինսկուն 1856 թվի դեկտեմբերին, ստորագրել է վրացերեն:

Ասել է՝ թե Սունդուկյանցն էլ յուր մանկության որերում հավանորեն վրացերեն է թոթովել ու հայերենը հետո յե սովորել:

Դերբենտից նա 1858-ին փոխադրվել է Թիֆլիզ, պաշտոն է ստանձնել ճանապարհների Հաղորդակության Վարչության մեջ և 50 տարի շարունակ ծառայելուց հետո, 1897 թվի փետրվարի 9-ին հրաժարական է տվել և արձակվել պաշտոնից, հասնելով բարձր աստիճանի և ստանալով 2500 ռ. կենսաթոշակ: Ծառայության ցուցակից յերևում է, վոր նա յուր բազմամյա ծառայության ընթացքում կատարել է բազմաթիվ, յերբեմն շատ կնճռոտ և դժվարին, հանձնարարություններ և ամեն անգամ էլ հաջողությամբ ու բարեխղճությամբ ու խոհեմությամբ, վորի հետևանքով և շահել է իր իշխանավորների հաճությունը և ծառայակիցների սերն ու համակրանքը:

Պետերբուրգում յուր ուսանողության որերում չորս տարվա ընթացքում (1846—1850), նա, հաճախելով ուսուցիչ և ֆրանսիական թատրոնները, և ավելի հաճախ վերջինը, տեսնելով ուսուցչական նշանավոր դերասաններ կարատիզինին, Մարտինովին և Մաչալովին, նույնպես Տիկին Արնոլդ Պլեսսին, Ալագին, Բերտոնին և ֆրանսիական թատրոնի մյուս նշանավոր դերասաններին, սեր է կապել թատրոնին, և Մոլյերը, Շեքսպիրը, Շիլլերը, վորոնց գրվածքները նա կարդացել է ֆրանսերեն լեզվով, դարձել է նրա ընթերցանության սիրելի հեղինակները:

Թատերական գրվածքների սերը, յուր ասելով, նրա սրտում յեղել է և առաջ, յերբ նա դեռ 17—18 տարեկան է յեղել և սովորելիս գիմնազիոնում: Այդ ժամանակները մի անգամ նրա ձեռքն է ընկել Շիլլերի «Սեր և Նենգություն» պիեսի ուսուցիչն թագմանությունը: Դա այնպես դուր է յեկել նրան և այնպիսի գորեղ տպավորություն արել նրա վրա, վոր թեև յերեկո յե յեղել և ուշ, և մայրն էլ թաղանձանքով ստիպելիս է յեղել նրան քնել, բայց նա չի կարողացել գիտքը ձեռքից թողնել, մինչև վոր արտասովորով վերջացրել է:

Չափազանց ուրախացել է նա, յերբ Պետերբուրգում 1846 թվին առաջին անգամ տեսել է Կարատիզինին Ֆերդինանդի դերում. նա այդ որվա-

նից սիրել է թատրոնը և բաց չի թողել և վոչ մի աչքի ընկնող ներկայացում Ալեքսանդրյան թատրոնում: Շչեպկինը Ֆամուսովի դերում միշտ նրա աչքի առաջ է յեղել և հիսուն տարի անցնելուց հետո յեկ նրան այնպես է թվել, թե դեռ լսում է նրա ձայնը:

Թիֆլիզում, յուր ծառայության գործերը կարգավորելուց հետո, նա ինքն էլ ձեռնարկում է գրել պիեսներ, նյութ առնելով Թիֆլիզի կյանքից, վոր նա մանկությունից այնքան կատարելությամբ ուսումնասիրել էր, գրելով Թիֆլիզի բարբառով, վոր նրա հոգուն այնքան ընտել էր և նմանվելով ուսուցչի կենցաղագետ — թատերագիր Ա. Ն. Սատրովսկուն, վորի հետ նա անձամբ ծանոթ է յեղել:

Նրա առաջին պիեսը յեղել է «Կիշերվա Սարբը խեր է», վոր առաջին անգամ ներկայացվել է Թիֆլիսում 1863 թվի հոկտեմբերի 23-ին. յերկրորդ պիեսը, վոր նա գրել է, յեղել է «Սաթաբալա»-ն, վոր առաջին անգամ ներկայացվել է 1866 թվի ապրիլին, վորի հաջողության շատ նպաստել է յուր փայլուն խաղով ժամանակի նշանավոր հայ դերասան Միհրդատ Ամերիկյանը, վորի հետ այն որվանից Սունդուկյանցը կապվել է բարեկամական ջերմ սիրով: Պահպանվել է մի յերկու նամակ, վոր փոխանակվել է նրանց մեջ Ամերիկյանի Պոլիս մեկնելուց հետո 1873 թ., վորոնց ամեն մի տողից յերևում է նրանց մտերմությունը և ընկերական մտ հարբերությունը:

Դրանց, այդ յերկու պիեսներին, հաջողությունը խրախուսել է նրան և պատճառ է դարձել նրան նվիրվելու թատրոնին և աշխատելու նրա համար:

«Սաթաբալայից» հետոնա գրել է «Ոսկան Պետրովիչը են-կինքումը» «Յեկ այլն կամ Նոր Դիոգենես», «Ելի մեկ դոն» և, վերջապես, «Պեպո»-ն:

Յուր գլուխ գործոց — «Պեպո»-ն նա գրել է 1870 թվի սկզբներին, և բեմ հանել հաջորդ 1871 թվի ապրիլի 30-ին, վորով նա առաջնակարգ թատերագրի համբավ է հանել և հուշակ ստացել վոչ միայն Հայերի մեջ, այլ և բոլոր Կովկասաբնակ ազգերի մեջ: Պեպոն թարգմանվել է ուսուցչական լեզուներով և հայ բարբառներով, հատկապես վրացերեն լեզվով: Վրացիք շատ են սիրել Պեպոն և իրենց բեպերտուարի մեջ միշտ առաջնակարգ տեղ հատկացրել նրան:

Սունդուկյանցը քաջ գիտեր վրաց լեզուն ու այնքան էլ ընտել էր վրաց կյանքին, վորքան վոր հայոց. նա մեծացել էր վրաց մեջ և իր խոսելու ու մտածելու առանձնահատկությամբ շատ չէր տարբերվում վրացի մտավորականներից, ուստի և վրաց գրական շրջաններում համարվում էր վոչ ոտար այլ հարազատ: Հանգուցյալի թղթերի մեջ պահպանվել է Պեպոյի և ֆրանսերեն թարգմանության ձեռագիրը:

Պեպոյի պահպանված ամենահին ու սկզբնական ձեռագրից յերևում է, վոր նա մի ձեռքով գրված չէ, այլ մի քանի: Հայտնի յե, վոր դա գրվել է Թիֆլիզի շրջակա ամառանոցներից մեկում — Կրմանխում: Սունդուկյանցը այդ մասամբ ինքն է գրել, մասամբ էլ թիլագրեր և Գեվորգ Չմշկյանին, Չաքարիա Բաբանասյանցին և Միհրդատ Ամերիկյանին: Հետագայում նա թեև գրա մեջ հետզհետե ու շարունակ փոփոխություններ է մտցրել, բայց

յուր հիմնական կառուցվածքով նա մնացել և այնպես, ինչպես մի անգամ գրվել ու թելադրվել է: Փոփոխութունները տիրապես յեղել են լեզվական և ժողովրդական և այս կամ այն վոչ այնքան ել եական հավելումներով ու հապավումներով:

Պեպոյի սկզբնագիրը ամբողջ թերթերից բաղկացած և կազմված մի տետրակ է, վորի ամեն մի թերթը յերկու հավասար մասի յե բաժանված: Բնագիրը գրված է յերկրորդ կիսի վրա, իսկ առաջին վրա միայն հավելումներն ու ուղղումները: Դուրս առաջին կիսի վրա, բաց տեղերում, գրված են և զանազան հետաքրքրական ծանոթութուններ, ինչպես, որինակ, առաջին յերեսի վրա — «Նվիրվում է իմ սիրելի Գեորգ Զմշկյանին. Գ. Սունդուկյանց»: Եջ 17 — «Մինչև յերկրորդ արարածը կըսկսեյի, յես համոզված եյի, վոր բարաթը պետք է Պեպոյի տանը լուս ընկնի»: Եջ 29 — «Եփեմիայի նման մեկը, վոր իր վրա եր առել այս գրվածքը, շատ նեղացած գանգատվել եր, թե «վճար որն իմ ես կինտոյիմեն իմքին առել, վոր ինձ վրա ես հանգի բան ին մոգոնի»: Գ. Ս. 25 նոյեմբերի 1902 թ.: Եջ 49 — «Այս թերթից մինչև վերջը մեկ գիշերում իմ թելադրել կըծանխում»: Եջ 57 — «Այս վերջը հետո յեմ գրել քաղաքում»: Եջ 58 — «Զմշկյանը վրա հասավ ու գրիչս տվի նրան»: Եջ 60 — «Կրծանիս, 1870, Ոգոստոսի 3-ին»: Վերջին թերթի բաց յերեսին, վորտեղ զանազան նկարներ ու գծեր են քաշված, իրը և աննպատակ գրչախաղ, գրված է «Զմշկյանի հունարը: Քանի վոր լեզուս դեմ եր նընգնում, նա եստունք եր խըժըժում: Գ. Ս.»:

Պահպանվել և Պեպոյի առաջին ներկայացման շքեղ աֆիշը, մետաքսի վրա տպագրված, վորից յերևում է, վոր ներկայացումը տեղի յե ունեցել թիֆլիզի քաղաքային թատրոնում, 71 թվին, ուրբաթ, ապրիլի 30-ին: Ներկայացման մասնակցել են առաջին անգամ Զմշկյանի խնդիրքով իր ազգական որ. Թագուհին և Ամերիկյանի խնդիրքով իր քույրը՝ տիկին Անայիսը:

Թիֆլիսի հայ դերասանական խմբի մեջ դերերը բաժանված են յեղել հետևյալ կերպով՝

Արուսիին . . .	Պ. Ամերիկյան	Գիքո . . .	Պ. Միրադյանց
Եփեմիա . . .	Տ. Անայիս	Կակուլի . . .	Պ. Արամյանց
Պեպո . . .	Պ. Զմշկյան	Գիգուլի . . .	Պ. Մանդակունի
Շուշան . . .	Տ. Արամյանց	Սամսոն . . .	Պ. Տ. Ասատուրյան
Կեկել . . .	Որ. Թագուհի		

Հետագայում ամենալավ դերակատարներ Պեպոյի գլխավոր դերերի մեջ հանդիսացել են — Գեորգ Զմշկյանը՝ Պեպոյի դերում, Գեորգ Տեր Դավթյանը՝ Գիքոյի դերում, Ամիրան Մանդինյանը՝ Կակուլիի դերում և Սաթենիկ Զմշկյանը՝ Եփեմիայի դերում, վորոնք մասնակցել են և Սունդուկյանցի գրական գործունեութան քսանհինգամյակին կազմակերպված հանդիսավոր ներկայացման 1888 թվի ապրիլի 30-ին և այդ առթիվ ուղարկել են հեղինակին իրենց լուսանկար պատկերները, հանված իրենց դերերի վորոշ տեղերում, հետևյալ բնորոշ ընծայականներով — «Պեպոն յուր հեղինակին — Գեորգ Զմշկյան»: «Անմահ Պեպոյի հեղինակին իր Կակուլի

Ամիրան Մանդինյանից», «Եփեմիան իր դերի հեղինակին», «Անմահ Գիքո-ի նախընտր Գարբիել Սունդուկյանցին Գեորգ Տեր-Դավթյանից»:

Պեպոյից հետո Սունդուկյանցը գրել է այլևս մի շարք պիլեսներ — «Քանդած Ոջախ», «Ամուսիններ», «Բաղնուսի Բողջա», «Մեր ու Ազատութուն» և այլն, բայց վոչ մեկի մեջ նրա ստեղծագործական քանքարը այլևս չի բարձրացել. չի հավասարվել նրա Պեպոյի մեջ արտահայտած տաղանտի բարձրութան:

Բացի ուսս հեղինակների — Գոգուլի, Գրիբոյեզովի, Ոստրովսկու և մյուսների գրվածներից, վոր նրա մշտական կարգալու և ուսումնասիրելու ատորկան են յեղել, նա, յուր ասելով, յուր «Գիշերվան Սարը խեր է» գրելուց հետո, կարգացել է Սկրիբի և Մոլյերի գրվածների ֆրանսիական բնագրերը և գրել է իր «Սաթաբալան», «Ոսկան Պետրովիչը են-կինքումը» և «Նոր Դիոգենեսը». հետո նա անձնատուր է յեղել Շիլլերի ֆրանսերեն թարգմանութան ընթերցանութան և գրել է յուր «Ելի մեկ դոհ»-ը և, վերջապես, նա կարգացել է Շեքսպիրի յերկերի ֆրանսերեն թարգմանութունները ու գրել է յուր «Պեպո»-ն ու «Քանդած Ոջախ»-ը:

«Սաթաբալայի» ու «Ելի մեկ դոհի» Մասիսյանցը և Միքայելը ինքը Սունդուկյանցն է, «Պեպոն» դարձյալ ինքը Սունդուկյանցն է, միայն հասարակ կինտոյի դիմակի տակ: Պեպոյի սուր, թունալից արտահայտութունները և խոսքերի մի խոշոր մասը, վոր նա ասել է Զիմզիմովին, մտացածին բաներ չեն, այլ իրոք ինքը Սունդուկյանցը ասել է իր հակառակորդին վկաների ներկայութամբ դեռ այն ժամանակ, յերբ տակավին «Պեպո»-ն գրված չի յեղել:

«Քանդած Ոջախի» Ոսեփը յուր Սունդուկյանցի ազգականներից մեկն է, իսկ Սաթոն նրա հանգուցյալ մայրը Թինաթինան. վոր յեղել է և նրա մյուս պիլեսներում դուրս բերված զրական, բարի կանանց տիպարների որինակը:

Սունդուկյանցի գրական գործունեութան մեջ ընդհանրապես նկատված է յերկու շրջան — առաջինը՝ նրա զարգացման շրջանն է, յերբ նրա տաղանտը, սկսած 1863 թվից, հետզհետե զարգանալով, հասնում է յուր գագաթնակետին, 1870-ին արտադրելով նրա գլուխ գործոցը — «Պեպո»-ն. յերկրորդը՝ անկման շրջանը, յերբ նրա տաղանտը գնալով թուլանում է. նա այդ միջոցում 1890-ից, նախ, յերկար ժամանակ վոչինչ չի գրում ու հետո ել, յերբ սկսում է վերստին գրել, տալիս է համեմատաբար շատ թույլ գրվածքներ՝ «Մեր և Ազատութուն», «Ամուսիններ» և «Բաղնուսի Բողջա», վորոնք վոչ միայն չեն կարող համեմատվել Պեպոյի հետ, այլ և շատ բանով հեռ են մնում «Քանդած Ոջախից» և «Ելի մեկ դոհից»:

Նրա գրվածքների մեջ մի ուրույն տեղ է բռնում «Ամուսիններ» պիլեսը, վոր նա գրել է գրական լեզվով և վորի մեջ նա շոշափել է ընդհանուր մոտիվներ, ու չի հաջողել, վերստին գրա մեջ նա դուրս է յեկել իրան ընտել թիֆլիզի կյանքի ու կենցաղի առանձնահատուկ և սպեցիֆիք շրջանից և այդ կյանքի ու կենցաղի առանձնահատուկութունները բարբառի բնորոշ վոճերով ու դարձվածքներով յուրահատուկ վարպետութամբ արտահայտելու հնարավորութունից: Նրա տաղանտը յուր ցայտուն ար-

տահայտութիւնը գտել է միայն թիֆլիզի կյանքից նյութ վերցրած կեն-
ցաղազորական գրվածքներում, և այն՝ թիֆլիզի նրա բերանում այնպես
ճկուն բարբառի գործածութեան պայմաններում:

Սունդուկյանցի բարեկամներից և նրա տաղանտը հարգողներից վո-
մանը նրան համեմատել են Մոլիերի հետ, գտնելով նրա ու ֆրանսիացի
թատերագրի մեջ նմանութիւն: Նրա թղթերի մեջ պահպանվել են Մոլիե-
րի յերկու մեծագիր ու փոքրագիր պատկերները, վորոնցից մեկի վրա մենք
կարդում ենք ֆրանսերեն — „Salut à Molière arménien Gabriel Soundoukiantz“,
մյուսի վրա ուսերեն — „Армянскому Мольеру“ և բժշկուպետ Հովհաննես
Գասպարյանցի այցելատոմսը, վորի վրա գրված է «Երկրորդ անգամ»,
«Վասն պատուական ընծայաբերութեան խորհին շնորհակալութիւն Հայ-
կագնեայ Մոլիերին Սունդուկեան: Միջնորդութեամբ Սանդրօի Ստեփան-
եան ի բժշկապետէ Հովհաննէս Գասպարեան. 28/IV 1911 օր հինգշաբթի»:

Այդ նկատուութիւնը, ի հարկէ ճիշտ է, բայց վոչ լիակատարօրէն,
այլ մասամբ: Այդպիսի նմանութիւն, և մենք կասենք, հեռավոր, մասնա-
վոր նմանութիւն, կարելի չէ գտնել ու բոլոր կենցաղաղիւր թատերագրե-
րի մեջ: Մոլիերի Լավանի, Տարտյուֆի, Յերեմիակայական հիվանդի տի-
պարները և առասարակ նրա ֆրանսիական կենցաղի պատկերացման յե-
ղանակը հազիվ թէ այնքան նման լինեն Սունդուկյանցի պատկերացման
յեղանակին ու դուրս բերած տիպարներին, վոր հնարավոր լիներ նրան
կոչել «Հայկական Մոլիեր»։ այլ բան է ուսու կենցաղագիր-թատերագիր
Ա. Ն. Ոստրովսկին, վորին շատ կողմերով նմանում է մեր Սունդուկյանցը:

Այդ է պատճառը, վոր հայ քննադատները ու նրա յերկերին ծանոթ
ուսաները սովորաբար և հաճախ նմանեցրել են Սունդուկյանցին Ա. Ն.
Ոստրովսկուն: Նորբա վախճանված ուսու հայտնի գերասանուհի Գլիկերիա
Ֆեդոտովան յուր հորեւյանի առթիվ Սունդուկյանցի 1912 թվի հունվարին
ստացած շնորհավորական հեռագրին ի պատասխան ուղարկել է նրան յուր
պատկերը, վորի հետև գրել է „Глубоко тронута лестным вниманием вели-
кого писателя, напоминающего мне нашего незабвенного Островского. Сер-
дечно благодарю за привет. Гликерия Федотова“:

Իսկ վոր Սունդուկյանցը նմանել է Ոստրովսկուն իր գրութեան յե-
ղանակով, իր պիեսներում դուրս բերած տիպարների և նկարագրած կյան-
քի հանգամանքներով, այդ էլ շատ հասկանալի չէ: Յերկուսն էլ կենցա-
ղագիր թատերագրեր են յեղել և իրենց գրվածքներում նկարագրել ու ներ-
կայացրել են վորոշ տեղի ու միջավայրի կյանքի պատկերը այդ տեղին ու
միջավայրին հատուկ պարագաներով ու դիմագծերով:

Ռուս թատերագիրը իր պիեսներում հատկապես դուրս է բերել հին
Մոսկվան, նրա „Замоскворечие“ կոչված քաղաքամասը, դուրս է բերել
նումը այգտեղ ապրող առևտրականների կյանքից վերցրած տիպարներ —
իրանց հատուկ ու այժմ մեզ համար միանգամայն խորթ առանձնահատ-
կութիւններով, վարք ու բարքով, սովորութիւններով: Սունդուկյանցը
հուշերը արել է թիֆլիզի վերաբերմամբ, ներկայացնելով հին թիֆլիզը յուր
առանձնահատուկ, նույնպես այժմ մեզ համար խորթ, կյանքով, մտածելա-

կերպով, աշխարհահայացքով: Այժմ չկան այդ կյանքը, այդ տիպարները,
վոր այնքան վառ գույներով արձանագրել է Սունդուկյանցի քանքարա-
վոր գրիչը, ինչպես վոր չկան և հին Մոսկվան, „Замоскворечие“-ն, իրանց
կյանքով ու տիպարներով, վոր վոչ պակաս վառ գույներով դուրս է բերել
ու անմահացրել Ոստրովսկին:

Մինչև իսկ լեզուն այն ժամանակները այդ միջավայրերում տիպիք,
յուրահատուկ է յեղել: Լեզուն ի հարկէ, ինչպես հին Մոսկվայում, նույն-
պես և հին թիֆլիզում, նույն ուսաց ու նույն հայոց բարբառներն են յե-
ղել, բայց առաջնում նա տարբերվել է ընդհանուր գործածական ուսաց
լեզվից իր առանձնահատուկ վոճերի ու բառերի գործածութեամբ, իսկ յերկ-
րորում՝ հին թիֆլիզին հատուկ վրացահայ բարբառի գործածութեամբ:

Յե՛վ այդտեղ Սունդուկյանցի Ոստրովսկուն գիտակցաբար նմանելու,
նրան ընդորինակելու խնդիր չի կարող լինել: Նա, անկասկած, կարդացել
էր նրա գրվածները և վորոշ չափով ազդվել նրանից, քանի վոր Ոստրով-
սկին նրանից մեծ էր (ծնված 1823 թ.) տարիքով, և ինքն էլ դեռ չէր
սկսել գրել, յերբ արդեն դուրս էր յեկել ուսու թատերագրի առաջին յերկու
հատորից բաղկացած պիեսների ժողովածուն (1859 թ.): Բայց Սունդուկ-
յանց գրել է ինքնուրույնաբար, անկախօրէն ստեղծագործելով, և միայն
նույնանման տիպիք կենցաղների պատկերացումը յերկուսի գրչի տակ էլ
ընականաբար առաջ է բերել պատկերացման նույն յեղանակը:

Սունդուկյանցը, ինչպես յերևում է, կարդացել, ուսումնասիրել է և Գրի-
րոյեղովի «Սեւիքից պատուհասը» և վորոշ չափով ազդվել է նրանից: Յուր
«Սաթարալայի» մեջ, վոր նա գրել է Հովհաննէս Տեր-Գրիգորյանի (Վանո)
գրգումով, թելադրելով այն նրան Կրճանխում, կարելի չէ գտնել մինչև
իսկ նրանից փոխ առած մտքեր ու նախադասութիւններ: «Սեւիքից պա-
տուհասի» մեջ մի տեղ, որինակի համար, Փամուսովը ասում է „С тех пор
дороги, тротуары, дома и все на новый лад“. Չացկին պատասխանում է,
„Дома новые, но предрасудки старые“. «Սաթարալայի» մեջ Յեսային և Մա-
սիսյանը խոսում են թիֆլիզի մասին, թէ ինչպես նա փոխվել է և սկսել է
լուսավոր քաղաքների նմանել: «Այսպիսի էլ ժողովուրդ կըլինի աշխարհիս
յերեսին», նկատում է Մասիսյանը, «հազուստը նոր, շինութիւնները նոր,
իսկ հասկացողութիւնները ելի են և, ելի են»:

Վոր Սունդուկյանցը անձամբ ծանոթ է յեղել Ոստրովսկու հետ և վա-
յել է նրա սերն ու հարգանքը, այդ այլևս կարծիք չէ, այլ փաստ, իրո-
ղութիւն: Հանգուցյալի թղթերի մեջ պահպանվել է „Русская Старина“
ամսագրի խմբագրութեան մի գրութիւնը Պետերբուրգից 1911 թվի հու-
նիսի 9-ին Սունդուկյանցին ուղղած, վորով նա հրավիրվում է գրել յուր
հիշողութիւնները Ա. Ն. Ոստրովսկու, ևս և Գոգոլի, Դոստոյեւսկու և Շչեպ-
կինի մասին՝ ամսագրում տպագրելու համար:

„Русская Старина ամսագրի խմբագրութիւնը“, գրված է այդ հրավեր-
քի մեջ, «թախանձում է Ձեզ ուղարկել իրան Ձեր չափազանց շահեկան հի-
շողութիւնները Գոգոլի, Շչեպկինի, Դոստոյեւսկու և Ոստրովսկու մասին,
նույնպես Ա. Ն. Ոստրովսկու Ձեզ գրած նամակները ամսագրում տպա-
գրելու համար:

Խմբագրութիւնս բարձր և գնահատում Ձեր գրամատիքական քան-
քարի արտագրութիւնները, և նամանավանդ «Պեպո»-ն, «Քանդած Ոջախ»-ը
և «Ամուսիններ»-ը»:

Այս հրավերքին Սունդուկյանցը նույն թվի հունիսի 21-ին ուղարկել
և Բորժոմից հետևյալ հետաքրքրական պատասխանը, վոր ավելորդ չենք
համարում այստեղ մեջ բերել, թարգմանելով այն ուսերենից:

«Ի պատասխան Ձեր հարգելի նամակին, վոր ստացել եմ Թիֆլիզում
իմ այգտեղից հենց դուրս գալուցս առաջ», գրում է նա իր այդ պատաս-
խանում, «պատիվ եմ համարում հաղորդել Ձեզ, վոր յես բազմ եմ ունեցել
ծանոթանալ Ա. Ն. Ոստրովսկու հետ նրա Թիֆլիզում յեղած որերում ին-
ժիներ Բախմետյեվի տանը, ճաշի ժամանակ. իմ ու նրա մեջ անմիջապես
սկսվեց մտերմական—բարեկամական զրույց զրականության, թատրոնի,
ժողովրդի լուսավորության գործի և այլ խնդիրների մասին: Դրանից հետո
շուտով կայացավ ի պատիվ նրա ներկայացում վրաց ազնվականության
թատրոնում վրացերեն լեզվով: Խաղում էին Ա. Ն.-ի և իմ պիեսները և
այլ ևս մի ուրիշ բան, վոր այժմ յես չեմ հիշում: Ա. Ն.-ը նստած եր բելե-
տաժի ոթյակում, յես պարտերում: Ա. Ն.-ի պիեսի ներկայացումից հետո
յես՝ նրան ուղղած արձկալից ծափահարության միջոցին՝ շտապով վեր
բարձրացա, վոր սեղմեմ նրա թանկագին ձեռքը, վորը և կատարեցի հան-
գիպելով նրան ներանցքում: Նա ինձ տարավ յուր ոթյակը, ծանոթացրեց
յուր այնտեղ նստած յեղբոր, պետական կալվածների նախարարի, հետ և
նստեցրեց ինձ նրա կողքին: Նրանք յերկուսն ել շատ սիրելի ու ուշադիր
վերաբերմունք ցույց տվին ինձ և մինչև ներկայացման վերջանալը այլ
յեկս չթողին, վոր յես դուրս գամ իրենց ոթյակից:

Ա. Ն.-ը իմանալով, վոր յես ունիմ իմ Պեպո պիեսիս ուսերեն ձե-
ռագիր թարգմանութիւնը, յուր Թիֆլիզից Մոսկվա մեկնելուց առաջ՝
առավ այն ինձանից, խոստանալով աչքի անցկացնել շխտել լեզուն, յեթե
հարկավոր լինի, և այնտեղ բեմադրել: Այդ մասին հիշված է և «Պեպո»-ի
Յուրի Վեսելովսկու ձեռքով 1896 թվին կատարված թարգմանության հա-
ռաջարանում:

Սակայն Ա. Ն.-ի ցանկութիւնը չեր կարող իրագործված լինել նրա
հիվանդանալու և գրանից հետո շուտով վախճանելու (1886 թ. հունիսի
2) պատճառով ի մեծ ցավ Ռուսաստանի բովանդակ մտավորականության:

Ա. Ն.-ի բարի վերաբերմունքը իմ անձի հանդեպ յես յերբեք չեմ մոռանալ:
Իսկ նամակներ, թերթերի հաղորդածի հակառակ, յես նրանից վոչ մի
անգամ չեմ ստացել: Թե նա ինչ կարողացավ անել իմ պիեսի վերաբեր-
մամբ, չգիտեմ:

Ինչ վերաբերում է սկանավոր Շչեպկինին, կարող եմ հաղորդել Ձեզ,
վոր յես նրան քանիցս տեսել եմ Ալեքսանդրյան թատրոնի բեմի վրա,
յերբ նա գալիս եր Մոսկվայից: Թեյեմ այն որերից զբա վրա անցել է 60
տարուց ավելի, բայց քանքարավոր խաղի տպավորութիւնը մտքիցս չի
գնացել: Նամանավանդ լավ եմ հիշում, թե ինչպիսի ցայտուն յեղանակով
նա կատարում եր «Ревизор»-ի մեջ Գորոզնիչու վերջին յեզրափակման մե-
նախոսութիւնը:

Գորոզի և Դոստոևսկու հետ, ցավ ի սիրտ, յես բազմ չեմ ունեցել ան-
ձամբ ծանոթ լինել:

Ահա այն բոլոր դուզնաքյա հիշողութիւնները, վոր յես կարող եմ
Ձեզ հաղորդել, Մեծարգո Պավել Նիկոլայեվիչ: (Воронов).

Թե վո՞ր ոուս կամ յերոպական գրողների ազդեցության և հատկապես
յենթարկված յեղել Սունդուկյանցը, և հատկապես ինչ կամ վո՞ր զրվածք-
ներից է նա ազդվել, բացի Ոստրովսկուց, Գրիբոյեդովից ու Մոլիերից,
վորի զրվածքներից «ժորժ Դանդեն» նա թարգմանել է հայերեն, դժվար է
մի վորոշակի բան ասել: Պահպանվել է նրա մի նամակը, զրված Յուրի Վե-
սելովսկուն 1902 թ. նոյեմբերի 19-ին ի պատասխան նրա տված հարց-
մունքներին, վորի մեջ մենք կարդում ենք հանդուցյալի հետևյալ սեփա-
կան կարծիքը այդ մասին:

«Յես Ձեր հարցմունքներին», գրում է նա յուր այդ նամակում, «պա-
տասխանում եմ բաց սիրտ, վոր ծնված ու կրթված լինել Ռուսաստանում,
անցած լինելով ոուս գիմնազիոնի և համալսարանի դասընթացքները, լսած
լինելով ոուս ուսուցչապետներին, նամանավանդ զրականության ուսուց-
չապետ Նիկիտենկոյին չորս տարի շարունակ Պետերբուրգի համալսարա-
նում, յես բնականորեն պիտի գտնվեյի ոուս մտավոր կյանքի ազդեցու-
թյան ներքո: Բայց թե վո՞ր ոուս հեղինակները ամենից ավելի յեն ազդել
իմ վրա և այդ հեղինակները վո՞ր զրվածքները հատկապես տպավորու-
թիւն են թողել, այժմ յես դժվարանում եմ վորոշել: Ինձ թվում է, վոր
յես քիչ թե շատ ամենքին ել յերախտապարտ եմ իմ զարգացման համար,
ինչպես և շատ ոտարագդի հեղինակների, վորոնց զրվածքները յես ման-
կութիւնիցս կարգացել եմ Ֆրանսերեն լեզվով:

Ամենից ավելի յես ինձ յերախտապարտ եմ համարում նախ՝ իմ մորս:
վոր իր բարությամբ և առողջ դատողությամբ յուր ամբողջ կյանքի ըն-
թացքում ղեկավարել է իմ գործողութիւնները, և, յերկրորդ, իմ դաստիա-
րակներին—գիտնական Ջրպետյանին և նրա կրթված Փարիզցի Ֆրանս-
սուհի կնոջը, վորոնց մոտ յես մնացել եմ վեց տարի շարունակ առավոտ-
յան ժամը ութից մինչև յերեկոյան վեցը:

Մայրս և իմ մանկության դաստիարակներս արել են այն, վոր խեղ-
ճին, զրկյալին և կարոտյալին յես միշտ վերաբերվել եմ կարեկցությամբ:
Յես, որինակ, յերբեք չեմ մոռանալ այն սասանիչ ներգործութիւնը, վոր
յես զգացել եմ 40 տարի սրանից առաջ Վիկտոր Հյուգոյի «Dernier jour
d'un condamné»-ի Ֆրանսերեն բնագիրը կարդալու ժամանակ»:

Նրա յուր ժորժ Դանդենի թարգմանության մասին Հայոց Դրամա-
տիքական ընկերության 1906 թ. նոյեմբերի 24-ին ուղղած մի բլոթյու-
նից մենք իմանում ենք, վոր նա շատ հավանելիս է յեղել Մոլիերի պատ-
կերացրած տիպարներին, զրանց, այդ տիպարները, չհնացած և ժամանակա-
կից համարելով մեր կյանքին, Թիֆլիզի բարբառն ել հարմար ֆրանսիացի
թատերազրի սուր յերգիծաբանութիւններն արտահայտելու, վորով և հա-
րեանցորեն ցույց է տվել, վոր հիշյալ տիպարները առանց ազդեցության
չեն մնացել յուր վրա:

«Արանից 28 տարի առաջ հայ դերասանական խումբը», գրում է նա հիշյալ թղթի մեջ, «անհետաձգելի պետք ունեցավ մի բեմական զրվածքի: Իրմեցին ինձ, և յես մի քանի որվա ընթացքում ստիպված եյի Ֆրանսերենից փոխադրել Մոլյերի «Փորժ Դանդեն» կատակերգությունը Թիֆլիզի բարբառով, վոր և ներկայացրին 1878 թ. ապրիլի 27-ին, բարեզորձական նպատակով: Փոխադրությունս կրում եր «Դանդան Գեյո» վերնագիրը:

Հասկանալի չե, վոր շտապ կատարված թարգմանությունը թերությունից զերծ չեր կարող լինել: Յես այդ զգում եյի, ուստի ներկայումս ազատ ժամանակ ունենալով, յես կարևոր համարեցի նորից թարգմանել անմահ թատերագրողի վերոհիշյալ յերկը, պահպանելով, վորքան ուժս ներում եր, Մոլյերի լեզվի և վոճի նրբությունները, հարմարեցնելով նրանց Թիֆլիզի բարբառի վոգուն: Ով վոր լավ ծանոթ է Թիֆլիզի բարբառին, նա կը խոստովանվի, վոր այդ բարբառը մեծ հարմարություններ ունի Մոլյերի սուր յերգիծաբանությունները արտահայտելու, թեև նրան տեղ-տեղ պակասում են դարձվածներ և բառեր, վորոնց ստիպված եյի փոխ առնել զբազան լեզվից: Այսպիսով սույն թարգմանությունը մեր բեմի համար հանդիսանում է, վորպես մի նորություն, թեև նրա ֆրանսերեն բնագիրը ներկայացված և յեղել 238 տարի առաջ: Մոլյերի պատկերացրած տիպերը յերբեք չեն հնանում մեր կյանքի համար, մանավանդ նրանք ավելի քան ժամանակակից են...»:

1888 թվին կատարվել է Սունդուկյանցի 25-ամյա զբաղման գործունեության հորելյանը, և հայ հասարակությունը շտապել է այդ առթիվ հայտնել նրան յուր հարգանքն ու յերախոսագիտությունը ուղերձներով, շնորհավորական հեռագրներով և նամակներով և Թիֆլիզում ու գավառներում նրա պիլյանների բեմադրությամբ, գնահատելով նրա տաղանտը և մատուցած ծառայությունը հայ գրականության: Այդ առթիվ, ի միջի այլոց, Գամառ-Քաթիպան ուղարկել է նրան մի վեցտողանի փոստանավոր—ուղերձ, վորի մեջ արել է հորելյարի հետևյալ բնորոշ ու շատ ճիշտ ու կտրուկ գնահատությունը—

«Ազգի շարավոտ վերքը լվանալ,
Լիրը մեծատունին անվախ ապտակել,
Դոհարներով ծածկված կեղտերը բանալ,
Կեղծավորության գիմակը պոկել,
Ու խեղճ կինտոյին դընել մարդու շար,
Այս ամենը գորեց միայն քո հանձար»:

Այս փոստանավորի ինքնաձեռագիր բնագիրը պահված է Սունդուկյանցի թղթերի մեջ ու կրում է «Գարբիել Սունդուկյանցի Պատկերի առաջ Գեկ. 23, 1888 թ.» խորագիրը, ինչպես պահպանված են նրա մյուս յերկու նրան նվիրած փոստանավորների ինքնաձեռագիր բնագրերը—«Արզրումի սոխակ»-ը «Իմ անմահ Գարբիել Սունդուկյանցին բարեկամական ընծա», ընծայականով և «Մեր որերու հայ բանաստեղծ», «Նվեր անմոռաց բարեկամության Պր. Սունդուկյանցին. 1887 թ. Տաքշուր» ընծայականով:

Ռափայել Պատկանյանցի սիրո և անմոռաց բարեկամության առհավատոյա պետք է համարել և այն 40 ինքնաձեռագիր փոստանավոր պարունակող տետրակը, վոր նա ուղարկել է նրան, ևս և 27 մտերմական և շատ գնահատելի նամակները, վոր նա զրել է նրան, վորոնք բոլորն էլ պահված են նրա թղթերի մեջ: Պահպանված է և Պատկանյանցի այն հեռագիրը, վոր նա ուղարկել է Թիֆլիզի հայ թատրոնական գործի ղեկավար Իշխան Ամատունուն 1890 թվի հունվարի 29-ին «Ամուսինների» ներկայացման առթիվ, վորի մեջ նա յուր հիվանդագին վիճակում գրել է՝ «Իշխան, յեթե հակառերինական բան չի լինիլ, խնդրում եմ և լրագրում եմ Ձեզ, վոր Դուք ում հետ հարկն է խորհրդակցելուց հետո, «Ամուսինների» ներկայացման որը իմ անունից, քանի վոր յես հիվանդ պառկած եմ անկողնում, դավիսպասակ դնեք մեր հանձարեղ թատերագիր Սունդուկյանցի գլխին և պսակավորված բանաստեղծի լուսանկարը ուղարկեք ինձ ի հիշատակ»:

Դույն 1888 թ. լրացել է և նրա ամուսնության 25 ամյակը—արձաթյա պսակը, վորի առթիվ նա յուր «Ամուսիններ» պիլյեսը նվիրել է յուր կնոջը, տիկին Սոփիա Սունդուկյանցին և զրան կցել է մի «Ձոն», զրված 1888 թ. հունիսի 16-ին, վորից յերևում է, վոր տիկին Սոփիան, վորի որրորդական աղջանունը յեղել է «Միրիմանյան», յեղել է նրա համար վոյ միայն պարզ սիրող, խնամող և հավատարիմ կին, այլ և մտերիմ ընկեր ու բարի խորհրդատու, մասնակից նրա բոլոր գործերին ու խորհուրդներին և, վոր զխավորն է, նա յեղել է նրան ոգնական և նրա զբաղման գործերում յուր «խելացի խորհուրդներով, նուրը ճաշակով ու սուր ակնարկներով» Դրան պետք է վերագրել այն քնքույշ սիրո և յերախոսագիտության արտահայտությունը, վոր նա յերևան է հանել ամեն անգամ, յերբ առիթ է յեղել հիշել յուր կնոջը, զրա հետեվանքով է, վոր նա, ի տրիտուր այդ բուրբ, ուրիշ ավելի թանկագին բան չի գտել, բայց թե զարդարել նրա անվամբ յուր այդ ժամանակների մտքի ծնունդ «Ամուսինների» ճակատը:

1901 թ. ապրիլի 30-ին լրացել է «Պեպոյ»-ի առաջին ներկայացման 30-ամյակը, վորի առթիվ նույնպիսի հանդեսներ ու ներկայացումներ են կազմվել, նույնպիսի շնորհավորական հեռագրներ ու նամակներ են ուղարկվել և ուղերձներ ու ձոներ մատուցվել նրան, ինչպիսին 25—ամյակի առթիվ: Արժանի չե ուշադրության Գեվորգ Չմշկյանի այդ առթիվ կազմակերպած Պեպոյի հանդիսավոր ներկայացումը Արախատիքական ընկերության թատրոնում յերկուշաբթի, ապրիլի 30-ին, 1901 թ.: Պահպանված Սունդուկյանցի պատկերով աֆիշից յերևում է, վոր առաջին ներկայացման մասնակցած դերասաններից չորսը՝ Միհրգատ Ամերիկյանը, Թագուհին, Միրազյանը և Տեր—Ասատուրյանը արդեն վախճանած են յեղել և գերերը ֆնացածների և նորերի մեջ բաժանվել են հետևյալ կարգով՝

- Արուսի Գ. Միրազյան
- Եփեմիա Տ. Սաթ. Չմշկյան
- Շուշան Որ. Վարդուհի
- Գիքո Գ. Տեր-Գավթյան
- Կակուլի Ա. Մանդինյան
- Գիգուլի Պ. Միրզայան
- Սամսոն Պ. Մամիկոնյան

5001
68976



Սոււնդուկյանցի թե՛ գրական գործունեութեան 25-ամյակին, և թե՛ Պեպոյի 30-ամյակին սուսցված բազմաթիւ ուղերձներից ամենակարեւորը յուր բովանդակութեամբ, յուր անկեղծ, սրտից բղխած արտահայտութեաններով, մտքերի խորութեամբ ու թատերագրի տաղանտը բնութագրելու և նրա կատարած դերի գնահատականը տալու հանգամանքով պետք է համարել վրաց թատրոնի հայտնի հին գործիչ, Պեպո-ի Գիքոյի դերը կատարող, Կոնստանտին Իմիտորովիչ Ղիպիանիի ինքնաձեռագիր շնորհավորանքը, յուր և վրաց դերասանական խմբի անունից, գրված Թիֆլիզում 1901 թ. ապրիլի 29-ին. ավելորդ չենք համարում քաղվածորեն մեջբերել նրան այստեղ, թարգմանելով այն ուսեսերեն բնագրից—

«Թանկագին Գավրիլի Նիկիտիչ՝

Վրաց թատրոնի պատմութեանը յուր կյանքում ապրել և յերկու միմիանցից խիստ տարբերվող շրջան: Առաջինը վերաբերում է 1850 թգականներին անմոռաց Իշխան Գեորգի Երիստովի հասարակութեան մեջ հանդես գալուն, վոր վրաց թատրոնի հիմք է դրել և տվել նրա հառաջխաղացման համար յուր դրամատիքական գործերը, մյուս դույնպիսի գործիչ Ջուրաբ Անտոնովի հետ միասին, վորոնց պիլեաներով միայն նույն ժամանակները պահպանում էր իր գոյութեանը վրաց թատրոնը:

Իրանից հետո տիրում է լուութեան. այլ և այլ պատճառներով վրաց մշտական թատրոնը փակվում է, և վոչ վոքի չինայող անողոք ժամանակը կորցում է այդ անհատներին հասարակաց ասպարեզից և վրաց թատրոնը քնի մեջ է ընկնում 25 տարի շարունակ, և լուում են նրա գործիչները:

Հանդես եք գալիս Դուք,— և վրաց թատրոնի համար վրա յեն հասնում ուրիշ ժամանակներ, նոր կյանք է սկսվում, սթափվելով 25-ամյա մահաքնից— յերևան և գալիս վերածնունդը:

Յուր այդպիսի վերածնունդով մեր թատրոնը ամբողջապես յերախտապարտ է Ձեզ, վորովհետև Դուք եյիք, վոր Ձեր դրամատիքական յերկերով նոր կյանք ներշնչեցիք և հնար ու միջոց տվիք թատրոնիս ընդարմացած դարկերակին նոր ուժերով աղբերանալու:

Դուք բարձր պահելով գեղարվեստի դրոշակը, նրա սոսափյունի ու շուքի տակ տվիք մեզ վեհ գեղարվեստական գործեր, բարձր գեղարվեստի յերկեր: Դուք թատերագիր չեք, այլ բանաստեղծ, վոր գրել է վոչ հանդերով և վոչ վոտանավորով, այլ մեր կենդանի խոսքով:

Ձեր դուրս բերած տիպարներին մենք ամենքս ել ամեն քայլափոխում հանդիպել ենք մեր կյանքի ճանապարհին, հանդիպում ենք նրանց այժմ և այս բոպիյիս, բայց մեզանից և վոչ վոք և վոչ մի ուշադրութեան չեր դարձրել նրանց վրա, մինչև վոր Դուք Ձեր դրամաներում և կատակերգութեաններում չը մարմնացրիք նրանց և մինչև վոր դրանով բաց չարիք մեր աչքերը մեզ շրջապատող միջավայրի վրա: Դուք Ձեր հարցասեր մտքով նշմարեցիք մեր առորյա կյանքում աչքի ընկնող տիպարներ ու վերարտադրեցիք արվեստի մեջ: Դուք ընտրանքով հավաքելով մեր կյանքի առկածումները, դտաք մարդկային կյանքի ապշեցուցիչ յերևույթները և յերբ այդպիսի կամքի մարմնացումը հղացավ Ձեր հոգին, Դուք յուրացրիք այդ

կամքը, դարձրիք Ձեր հոգեվոր սեփականութեանը և արվեստի համար նյութ նախապատրաստեցիք, — այդ պատճառով և, վոր Ձեր յերկերում պայծառորեն փայլում է խորին իմաստը:

Դուք Ձեր այդպիսի ընդունակութեաններով կենդանացրիք հասարակութեանը, և Ձեր որինակին հետեւելով և, վոր այժմ յերևան են յեկել մեզանում թատերագրերի, ինքնուրույն հեղինակների, թարգմանների, փոխադրողների, կոմպիլյատորների մի ամբողջ շարք, ու այդպիսով Դուք ուժեղ զարկ տվիք հառաջադիմելու և մեր գրականութեան...

Յեթե մեր կյանքի անցքերը գրավել են Ձեր հարցասեր ուշադրութեանը և առաջ են բերել Ձեր մեջ համակրանք,— այդպիսի համակրանքի աղբյուրը պետք է վորոնել Ձեր արտահայտած մտքերի մեջ, Ձեր պիլեաներում: Իսկ վորպեսզի Ձեր հեղինակապատկան գեղարվեստական բնագրը արձագանք գտներ մեր մեջ մենք պետք է անցնեյինք նույն ճանապարհով, վոր Դուք եք անցել. մենք պետք է անձամբ մեր վրա փորձեյինք այն բոլոր տպավորութեանները, վոր Դուք եյիք քաղել Ձեր արած գիտողութեաններից մեր կյանքի վերաբերմամբ և արտահայտել Ձեր պիլեաներում: Այդ գեպքում միայն Ձեր մայրենի թատրոնի գերասաններն վերաստեղծելով արվեստագետի գաղափարը, կարող եյին հանդիսանալ, իբրև յերկերի նոր ստեղծարար, և դերասանները, պետք է ասել ի պատիվ նրանց, լիովին հասել են այդ դժվար նպատակին, Ձեր տիպարները այնպես դուրս բերելով, վոր նրանցից ամեն մեկը հանդիսանում է իբրև մի լիակատար ավարտված քաղված պատկեր: Վոչ բոլոր մահկանացուներին և վիճակված լինում ոժտված լինելու այդպիսի ընդունակութեաններով, այդ պատճառով և մենք առաջ ենք քաշում Ձեզ մեր միջից, իբրև բարձր տաղանտի տեր մի միավոր:

Այն, Դուք բանաստեղծ եք, վորովհետև մեր առորյա գորշ ու նյութական շահերով տարված կյանքից դուրս եք կորզել տիպարներ, վորոնք չեն մեռնիլ մեր մեջ, վորոնց Դուք անմահացրել եք: Մթթե կարելի յե մոռանալ Ձեր Չամբախովին, Ոսեփին, Չիմզիմովին, Պեպոյին, Կակուլուն, Գիքոյին, Եփեմիային, Ոսկան Պետրովիչին, Յեսայուն, Գեորգ Մասիսյանին, Աբել Մաստակյանին, Մարգարտին ու շատ ուրիշներին....

Յես, վորպես վրաց թատրոնի գործիչներից ամենահինը, ել ավելի բերկրանքով վողջունում եմ Ձեզ այսորվա հանդիսին, վորովհետև մենք, մայրենի թատրոնի գործիչներս, սնվել ու մեծացել ենք Ձեր պիլեաներով. մենք ուսել ենք արվեստը Ձեր պիլեաների վրա, մենք վոգեվորվել ենք Ձեր յերկերով և այսպիսով Ձեր աշակերտները լինելով, հրձվանքով շնորհավորում ենք Ձեր այսորվա հորելյանը, քանի վոր վոչ ամենքիս և վիճակվում հետագա սերնդի այդպիսի յերախտագիտութեանը, ինչպես Ձեզ և այլն:

1911 թ. ոգոստոսի 14-ին Բորժոմում Սոււնդուկյանցը գրել է յուր հայտնի կտակը «Իմ մահն ու թաղումը» խորագրով և «Գալրիկի— Համալ» ստորագրութեամբ և մի յերկտող նամակով, վոր կտակի բնագրի հետ պահպանվել է նրա թղթերի մեջ, ուղարկել և «Մշակի» խմբագրութեան, խնդ-

րելով, վոր այն տպագրվի անմիջապես յուր մահից հետո, և թույլ տալով մյուս թերթերին յեզու արտատպելու այն, յեթե կամենան:

Դրա, այդ կտակի մեջ, նա հա. տնել և իր վերջին կամքն ու ցանկությունները՝ հուղարկավորվելու Պեպոնների ձեռքով և թաղվելու պարզորեն մի քահանայի և նրա ոգնական մի տիրացուի հոգեվոր արարողությամբ. մահարձան չարվի իր վրա, այլ մի սե քար, իսկ հուշարձան դնելու հանգամանքի առաջ գալու դեպքում ցանկություն և հայտնել, վոր արձանը դրվի վոչ իրան, այլ Պեպոյին, և այդ վորտեղ վոր հարմար համարվի:

Այդպիսի հուշարձանը պիտի ներկայացնե Պեպոյին կանգնած, գդակը ծածկած, մեկ ձեռքին Արութին Զիմզիմովի «Բարաթը», մյուս ձեռքն ել Բարաթի վրա գրածը Արութինին ցույց տալու ձևով, Արութինին, վոր գլխաբաց ու սերթուկով սեվերես կանգնած պիտի լինի նրա կշտին:

Հուշարձանի պատվանդանի վրա փորագրված պիտի լինի «Պեպո» և նրա «Ես քո կտորած ձեռքով չիմ գրի» խոսքերը, և վոչ մի տեղ հիշված չպիտի լինի յուր, Սունդուկյանցի, անունը:

Կտակը արժանի յե ուշադրության իր ամբողջ բովանդակությամբ, ժայց հատկապես ուշադրության արժանի յեն նրա մնաս բարովները, վորոնց մեջ կան և հետևյալ յերկուսը «Մնաք բարով, սիրելի մարդիք, ինչ ասկի, ցիղի ու հավտի ել ըլիք» և «Մնաս բարով, իմ սիրելի և պաշտելի ասկ, Աստուծ վաթանիդ արժանի անե»:

Սունդուկյանցը վախճանվել է 1912 թվի, ուրբաթ, մարտի 16-ին, յերեկոյան ժամը 10-ին, յուր 87 տարեկան հասակում: Ավագ Հինգշաբթի, մարտի 22-ին կատարվել է նրա հուղարկավորությունը ու թաղումը Վանքի յեկեղեցու գավթում, վորտեղ նրա կողքին թաղվել է հետո և նրա կինը Սոփիան: Նրա բաց գերեզմանի առաջ դամբանականներ են խոսվել, վորոնցից հուղարկավորողների առանձին ուշադրությանն և արժանացել Մակար Զմշկյանի Թիֆլիսի բարբառով գրած վոտանավոր—դամբանականը, վոր կրում է «Ազիդ Գաբրիելի հիշատակին» խորագիրը—

«Ո՛վ դուն ստեղծագործ, միւր բուն քաղկցի,
Հալալ Պեպոյին ստեղծող մինձ վարպիտ,
Ազիդ Գաբրիել, անմահ հայ — Դատա,
Մագալու գրող, միւր «Համալ» աղա և այլն:

Սունդուկյանցը վախճանվել է «Ծերախտ կամ ձերության ախտ» կոչված հիվանդությունից (Старческий маразм): Յուր կյանքի վերջին տարիները, ինչպես յերևում է բժշկական վկայականից, նա այնքան թուլացած է յեղել, այնքան ուժասույառ յեղած, վոր ձեռքերը և վոտքերը յերկարացնելու ժամանակ դողացել են, նամանավանդ աջ ձեռքը, վորի հետեվանքով նա չի կարողացել առանց ուրիշի ոգնության հագնել և հանել շորերը, և վոր գլխավորն է, դժվարացել և գրել, վորովհետև գրելու ժամանակ տառերի փոխանակ ստացվում են յեղել մի շարք կետերի գծագրություն, վոր բնականապես դժվար ընթեռնելի յե դարձրել նրա գիրը: Այդ և պատճառը, վոր նրա վերջին նամակներն ու թղթերը կամ մեքենագրվել են, կամ ուրիշները գրել, իսկ նա ստորագրել է միայն: Այնուամենայնիվ

նա իր «Իմ մահն ու թաղումը» հրաժեշտի սեվագրությունները, յուր մտերիմներին գրելիքները մինչև վերջն ել յուր ձեռքով և գրել:

Սունդուկյանցի մահվան առթիվ լույս են տեսել բոլոր թերթերում համառոտ կենսագրականներ, հիշողություններ և գնահատականներ նրա մասին, իսկ Տիգրան Նազարյանցի «Տարագի» հերթական բացառիկ համարը ամբողջապես նվիրվել է նրա հիշատակին: Դրա մեջ դուրս են յեկել նրա ընտանիքի և նրան վերաբերյալ բազմաթիվ լուսանկար պատկերներ հանգուցյալի մտերիմների հիշողություններով ու գնահատականներով, վորոնք թանկագին ու հարուստ նյութ են բովանդակում իրանց մեջ նրա կյանքի ու գրվածների մասին:

Արժանի յե այդտեղ ուշադրության Աշուղ Հաղիրի մի շատ համառոտ հիշողությունը, Հաղիրի, վոր 30 տարի դրանից առաջ իր յերաժշտական խմբով նվագել ու յերգել է հայոց ու վրաց ներկայացուցիչներին և հաճախ արժանացել Սունդուկյանցի ու Ակակի Ծերեթելու գովասանքներին, վորոնք սովորություն են ունեցել ներկայացուցիչների միջոցներին թեվանցուկ զբոսնել ու հաճախ գալ կանգնել խմբի մոտ, լսել յերգերը, և կեցցե—վաշաներով իրանց գոհությունը հայտնել:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել և Աշուղի «Պեպո»-յին յուր հիշողության հետ միասին նվիրած յերգը, վոր, իբրև ժողովրդի միջից դուրս յեկած հասարակ մարդու մաքի ու զգացմունքի ծնունդ, նույնպես արժանի պիտի համարվի ուշադրության—

Սունդուկյանցի բարի հիշատակ, Պեպո-ջան,
Հայոց ազգի վարդ—մանիշակ, Պեպո-ջան,
Հայրդ մեռավ, թողեց կտակ, Պեպո-ջան,
Վոր քեզ պահենք մաքուր, իստակ, Պեպո-ջան:

Դու քու ընկեր կակուլու հետ կաց սերով,
Ուրախ, զվարթ կյանք վարեցիք քեֆերով,
Գտակդ քեշ, դամբդ լիքը ձկներով,
Դոնադ սիրե, չուտես մենակ, Պեպո-ջան:

Դու կյանքի մեջ ծանր լուծը տանողն ես,
Արդարության թշնամուն սպանողն ես,
Ուրացող հաստատ աչքի հանողն ես,
Զիմզիմովի սրտին գնդակ, Պեպո-ջան:

Հայրդ ասավ, «Պեպոյիս լավ պահեցիք,
Մի տուն տվեք, դռն-դուռ չգցեք,
Դուան կողքին արձան կանգնեցրեք,
Գլխին զգակ, ձեռքին մուրհակ, Պեպո-ջան:

Արդեն պրծավ քո դռն-դուռ ման գալը,
Վճռված է քո տանը քո մնալը,
Քեզ մեզ հանձնեց, ինքը գնաց Համալը,
Նրա պատվերին չենք հակառակ, Պեպո-ջան:

Դու յես մեր թատրոնի փառքն ու պարծանքը,
 Կատարեցիր դու մեր սրտի բաղձանքը.
 Տեր Աստվածը յերկար անի քո կյանքը,
 Ժողովրդի հալալ զավակ, Պեպո-Ղան:

«Տարագ»-ի վերոնիշյալ (ապրիլի 4, 1912 թ.) համարում լույս տեսած Սունդուկյանցի բաղմամբիվ գանազան ժամանակների լուսանկարների շարքը չի մտել նրա մի շատ հաջող լուսանկարը, վոր պահպանվել է թանգարանում նրա թղթերի մեջ: Դրան կցված է և մի վեցասողանի Թիֆլիզի բարբառով գրված վոտանավոր, վոր ավելորդ է ենք համարում այստեղ մեջ բերել—

«Դուն, միք Գարբիել,
 Բիզ վունց ինք սիրել.
 Դու ու Գու «Պեպոն»
 Վունցվուր լավ ձերոն
 Կպիլիք միզի
 Ել պուկ չիք գալի»:

Սունդուկյանցը շատ մտահոգված է յեղել յուր պիյեսներին, հատկապես Պեպոյի, ոտար բեմերի վրա ներկայացված տեսնելու մտքով: Այդ նպատակով նա պատրաստած է յեղել Պեպոյի այն ուսերեն թարգմանությունը, վոր Ոստրովսկին տարել է իր հետ Մոսկվա բեմադրելու նպատակով, բայց չէր հաջողել յուր վերահաս նիվանդություն և վախճանելու պատճառով, և թարգմանությունը կորել էր. նրա ցանկությունը և Ադ. Մատուրյանի աջակցությամբ հետագայում այն խնամքով վերստին թարգմանվել է Վեսելովսկու ձեռքով և տպագրվել Մոսկվայում 1896 թվին:

Նույն նպատակով նա պատրաստել է Պեպոյի և այն ֆրանսերեն թարգմանությունը, վոր պահպանված է նրա թղթերի մեջ: Թե ում ձեռքով է կատարված այդ թարգմանությունը, մենք չգիտենք. մենք միայն կարող ենք ասել, վոր նա կամեցել է այդ ուղարկել Պարիզ և ներկայացնել ֆրանսիական բեմի վրա 78 թ. ցուցահանդեսի որերով, յերբ նա ինքն էլ գնացել է Պարիզ: Նրա թղթերի մեջ գտնվում է Թիֆլիզի ֆրանսիական հյուպատոսի նամակը, ուղղված հայտնի ակադեմիկոս Վիկտորիեն Սարդուին (Victorien Sardou de l'Académie Française), վորից յերեմում է, վոր Սունդուկյանցը ցանկացել է 1878 թ. ֆրանսիական ցուցահանդեսի որերով (l'Exposition Internationale) ներկայացված տեսնել յուր «Պեպո»-ն ֆրանսիական բեմի վրա, ուստի ձեռնարկել է պատրաստելու կամ պատրաստել տալու նրա ֆրանսերեն թարգմանությունը ու ուղարկելու այն Սարդուին, վոր նա թարգմանության լեզուն վերջնականապես շիտկելուց հետո, աջակցի այդ գործի հաջողության, խոստանալով իր վրա առնել զգեստների և սարք ու կարգի հաջողությունը:

Հյուպատոսը ինքն էլ համակարծիք է գտնվել Սունդուկյանցին և անշահեկան չի համարել նրա այդպիսի ցանկություն իրագործումը, քանի վոր, նրա գրելով, ցուցահանդեսը միջազգային էր, հայկական խնդիրն էլ

այդ ժամանակները հրապարակի վրա յեր գրված, և Սունդուկյանցի պիյեսներն էլ, նամանավանդ «Պեպո»-ն, Թիֆլիզի մեջ, վոր հայ մտավորականության կենտրոնն էր, մեծ հարգ էյին վայելում: «Պեպո»-յի ֆրանսերեն թարգմանությունը հրատարակված է Թիֆլիզում „Le Caucase illustré“ պատկերազարդ հանդեսի 1899—1900 թվի 2, 3, 4 համարներում, հանդիսի, վոր լույս էր տեսնում Մուրիեյի խմբագրությունը:

Այդ հրատարակության տակ գրված խմբագրության ծանոթությունից մենք իմանում ենք, վոր այդ թարգմանությունը կատարված է յուր Սունդուկյանցի և մի վոմն Ստադլինի ձեռքով:— „Cette comédie, écrite en langue arménienne, ասված է այդ ծանոթության մեջ, a été traduite en français par l'auteur lui-même et M. Stadlin. Nous avons retouché le style, abrégé une foule de scènes et supprimé les termes et les phrases trop „couleur locale“. Telle quelle cette Comédie est une éskise de moeurs populaires de Tiflis et c'est à titre que nous la publions“ և այլն: Բայց թե այս այն թարգմանությունն է, վոր պահպանված է նրա թղթերի մեջ, կրկնում ենք, չենք կարող ասել, վորովհետև պահպանված թարգմանության տակ վոչ հեղինակի ստորագրությունն էլ, վոչ էլ նրա ձեռքով է գրված:

Մենք ասացինք, վոր Սունդուկյանցը 1878 թվին գնացել է Պարիզ. նրա թղթերի մեջ պահպանված վավերականներից պարզվում է, վոր նա այդ ճանապարհորդությունը կատարել է յերեք նպատակով. նախ՝ վոր նա յուր մանկություն որերից յուր դաստիարակչուհի ֆրանսուհուց այնքան շատ և լավ բաներ է լսած յեղել Պարիզի մասին, վոր սրտով կպած է յեղել Ֆրանսիայի մայրաքաղաքին և ջերմ ցանկություն և ունեցել այցելել այդ քաղաքը և աչքով տեսնել նրա հրաշալիքներն ու այն բոլոր տեղերը, վոր նա միայն պատմությունը էր լսել և տպավորել իր սրտում. յերկրորդ՝ տեսնել դույն թվին այդտեղ կազմակերպված միջազգային ցուցահանդեսը «L'Exposition Internationale» և յերրորդ՝ ցուցադրել յուր Պեպոն ֆրանսիական բեմի վրա, վորի համար նա Թիֆլիզի ֆրանսիական հյուպատոսի միջոցով գրագրություն էր սկսել ակադեմիկոս Սարդուի հետ:

Նա յուր առաջին յերկու նպատակին հասել էր լիակատարորեն և այնքան բավականություն ստացել, վոր յուր ասելով, «նրա կյանքի մեկը յերկու յե դառել»: Նրա յերրորդ նպատակը չի իրագործվել, վորովհետև Սարդուն, Ալեքսանդր Դյուման (վորդին) և մյուսները խորհուրդ չեն տվել, անհարմար համարելով Պեպոն ֆրանսիական բեմի համար և անհամապատասխան Պարիզի թատերասեր հասարակության ճաշակին և հասկացողության:

Հանդույցյալի թղթերի մեջ պահպանվել են նրա մի քանի նամակը, վոր նա գրել է ճանապարհից և Պարիզից յուր կնոջը: Դրանք, այդ նամակները, չափազանց հետաքրքրական են թե իրենց բովանդակությամբ, և թե գրելու ձևով ու լեզվով, թե նրանց մեջ արտահայտված զգացմունքներով, և թե տպավորություններով, վոր նա ստացել է յուր սիրած համաշխարային մեծ քաղաքում, դրանք կարող են շատ կարևոր նյութ մատակարարել մեզ

նրա բնավորութագրութեան համար: Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել նմուշի համար այդ նամակներից յերկուսը:

Փարիզ 1878 հուլիսի 8
հունիսի 26

Իմ անդին Սոնաջան

Երեզ առավուտեհան հասա Փարիզ, են քաղաքը վոր յարսուն տարի երազումս տեսնում եյի.

Աճկով տեսնում իմ ես Փարիզը, մեջը ման իմ գալի, մեջը շունչ իմ քաշում.

Ամա տարիք ե հարկավոր Փարիզը թամամ տեսնիլու. երեզվան դեսը կյանքս մեկն երկու դառավ: Սահաթի վիցի կեսն եր (Չեր սհաթով 9¹/₄) առավուտվանը վուր դադրած, լախած, անքուն, գլուխս վագոններու թխրխուցեմեն գնացած իրիք որվան առանց շուր ու չեքմա հանել մաս ես խիլքի ու լուսավորութիւնի մայրաքաղաքը, ու սրա գորութենիմեն են սհաթին շուրս հաքա, դուս գնացի ու սաղ որ ելի վուտիս վրա եյի: Տերը բարի տա Գարսունին, Որբելուն ու Սանդամովին. մե նմուտ կշտե չին հեռացի: Քիչ վուր ասիմ յարսուն վերստ վուտով մոն եկանք ու զարթնի ես Վանատմի կոլոնը զիվիր գնացինք. փանաոր ձիոխս վիկալա ու ննգա առաչկը 17% վուտը ինչ հանաքնիրով ու ծիծաղնիրով զիվիրինք գնացի...

Ախ Գարրիել եստի ել վուրտի զիվիր բերիլ միզ, կոսե... Բաս Փարիզումս ինչիք շինում, ասի... Ենժանց վուխչ Շան զերեզն անցկացանք ու Արկ դը Թրիոնֆի վրա, վուր 281 վուտն ունե լոթիանոց զիվիր գնացինք: Ես երկու բացրութիւնիրիմեն վուխչ Փարիզը տեսնում եի ու աճկիս չեի ավտումս...

Ամա ես անձանոթ քաղկումը, վուրդի գիփ նուր ե ինձ համա, զիփ տեսած ու սիրած ե թվում ինձ. երեխուց սիրտս հնենց կըպած ե ելի ես քաղկին, վուր հենց գիտեմ եստի եմ ծնե...

Երեխերանցը պաշ արա ու զիփունին հարց ու բարով

Պերչատկիա № չիմ գիտի. գրե

Քու Գարրիել

Փարիզ 1878 հուլիսի 21
9

Առանց քեզ ինչ կոնիմ սոյբաթն ու սազը
Սայաթ—Նովա

Առանց քիզ ինչ կոնիմ Փարիզը, Սոնաջան, իմ քաղցր, իմ նազ Սոնաջան: Քո ձենը, երեխանց ձենը վոր չիմ լուում, Չեզ վուր չիմ տեսնում, զիփ քնթես դուս ե գալի...

Որն որվան վրա սիրտս հնենց կուչ ե գալի, վուր յենց գիտիմ ես գուրքած ու զարգարած զրախտը ինձ համա զժուխի ի...

Եստու համա ել մտկումս գրի վուր եքուց յեա ելոր մնաս բարով պատ-

վական Փարիզ ասիմ, հիշեմ Աստված ու գամ քիզ ու միր երեխանցը վաթթվիմ:

Ես գիրն ու իս մեկ մեկու առաջքը կուլի մե որով յլու կարինք. .

Մարթու աճկը վուչնչինչը չի կշտացնի... քանի ետի եի, հայ Փարիզ ու Փարիզ. հիմի վուր ետտի իմ, հայ իմ Թիֆլիզ ու Թիֆլիզ...

Ինչ անիս եսենց ինք ստեղծած...

Քու վրա երկու նամակը իրիգուն ստացա ու ինչ ավատացնիլ կուլիս վուր խիստ ուրախացա. երեխանցը պաշ արա ու զիփունին հարց ու բարով:

Մե գուրա թագա խաբարնիր իմ բիրում. ել ով կուտնջացնե ինձ... մե գլուխ Սարակել կու դառնամ... Ես երկու որ ե, Գարսուն չե հեռացե ինձմեն... մետի ման ինք գալի. . մեկ ել որը Tour de St-Jacques (ը) զիվիր գնացինք, (308 վուտն ունե), մտանք իժում Palais de Justice, St-Chapel, Notre Dame, Jardin de Luxembourg ու իժում յիս գնացի théâtre français մե տեստի իմ տիսի, վուր ամութ ե ձիոխս դալամ վիկուչնիմ յորես խտնը...

Մնաս բարով իմ սիրուն, փափուկ, նազ ու քաղցր Սոնաջան, Աստված արժանի անե ինձ քո տեսին:

ՔՈՒ ԳԱԲՐԻԵԼ

Սունդուկյանցի վերջին ինքնուրույն գրվածքը յեղել ե «Կտակը», կատակերգություն 4 արարվածով, վորի վրա նա աշխատել ե մինչև յուր կյանքի վերջին որերը ե պատրաստել տպագրութեան համար, ե Լ. Տոլստոյի «Կենդանի դիակ» պիյեսի մի հատվածի թարգմանությունը, վոր կատարած լինելով Տիգրան Նազարյանցի խնդիրքով, տպագրվել ե «Տարազի» 11 համարում:

Նրա վերջին տպագրած գիրքը յեղել ե «Համալի Մասլահաթները» (14 մասլահաթ), վորոնք հետզհետե տպագրվել են «Մշակում», իրրե ֆելյետոններ, ե հետո հավաքել ու լույս են ընծայել 1912 թվին առանձին գրքով, նվիրելով «Մշակի» խմբագրութեան նրա քառասնամյակի առթիվ: Նույն հավաքածվի հանգուցյալի թղթերի մեջ պահված սրբագրութեան թերթերի շաղկից յերևում ե, վոր զրան պիտի կցված լիներ ե նրա «Վարինկի վեչերը» խորագրով գրվածքը, վոր տպագրված ե յեղել «Մշակի» 1877 թվի 1, 2, 5, 8, 11 ե 14 համարներում, բայց մեզ անհայտ պատճառով տպագրվածի մեջ չի յերևում, ինչպես ե չեն կցվել կամ չեն մտել հավաքածվի մեջ ե Արձագանքի 1882, 83 ե 1886 թվերի մեջ տպագրված հանդուցյալի «Հաղիղի Մասլահաթները» (5 Մասլահաթ):

Սունդուկյանցի թղթերի մեջ պահպանված են նրա պիյեսների հետեվյալ ձեռագրերը:

1. Պեպո, բնագիրը ե մի ուրիշ որինակ.
2. Մախլաս, կոմեդիա յերեք արարվածով, 1866 թ. նոյ. 28.
3. Ելի մեկ զոհ, զրամա հինգ արարվածով, Տիֆլիսու բարբառով, հեղինակած զերերը փոխադրված ներկա գրական լեզվի Մ. Ղ. ից:
4. Նատո կամ Սիր ե Կապանք, վոզբերգություն 2 արարվածով, 1909 թ.
5. Սեր ե Ազատություն, կատակերգություն 5 արարվածով:

- 6. Ոսկան Պետրովիչը են-կինքումը:
- 7. Խորտակված շղթա (Սեր և Կապանք), կատակերգութուն 4 արարվածով:
- 8. Կտակ (յերեք որինակ), կատակերգութուն յերկու արարվածով, նվիրված բարեգործական ընկերութեան, նրա 30-ամյակի առթիվ:
- 9. Յեզ ալն կամ Նոր Դիոգոնես, առաջին անգամ ներկայացված Թիֆլիզի քաղաքային թատրոնում 1869 թվին, մայիսի 2-ին:
- 10. Բաղնիսի Բողջա, կատակերգութուն:
- 11. Ամուսիններ, նվիրված Սոփիա Սունդուկյանին:
- 12. Ժորժ Դանդեն (Դանդան Գեվո, խայտառակված ամուսինը կամ մարթը), թարգմանութուն Մուլիերից: Առաջին անգամ ներկայացված է Վերսալում 1668 թվին:

Բացի այս գրվածքներից, նրա թղթերի մեջ մենք գտնում ենք և մի քանի գրաբառ ու Թիֆլիզի բարբառով գրված վոտանավորներ, վորոնք նրա ստորագրութունն են կրում և նրա ձեռքով են գրված, վորոնցից, և հատկապես բարբառով գրվածքներից, մի յերկու նմուշ ավելորդ չենք համարում դնել այստեղ—

Սիրեկանս ինձ ուստ եկավ,
 Սալամ երիտ ծիծաղելով,
 Քաղցրը աչքով մըտիկ արավ,
 Սըրտիս ցավը փարատելով.
 Եկավ մոտըս, ձեռըս բռնեց
 Քեփիս ավալը հարցնելով,
 Սիրտըս բըլավ, ել չը դիմցա,
 Գանգաղվեցա յես լացելով:
 Ասի թե՛ քու սիրու կրակով
 Սիրտըս երած ու խորված ե,
 Ուշկ ու միտկըս քիմեն տարած,
 Խիլքըս մըթնած ու խառնած ե.
 Ման իմ գալի յանա յանա,
 Կինքըս քու ճանփին մաշած ե,
 Եշխիդ չանգով, հուլի հանգով,
 Հոգիս ջանեմես հանած ե:
 Խըզճաց յարըս, շինքըս նընգավ,
 Փաթըթվեցավ, դոշիս կըպավ,
 Իր նազ ձեռնով ավատացրուց,
 Վուր իմ սերը սիրտը նընգավ,
 Եշխի բանգով յես հարփեցա
 Դրախտ ու դըթուխկ մտես նընգավ,
 Զարթիմ, տեսնիմ երազումս իմ.
 Լացով ջիգարըս կրակ նընգավ:
 29 հուլիսի 1867 թ.:
 Գ. Սունդուկյանց:

Ախ, իմ սիրեկան, ինձմեն հեռացար,
 Ի՞նչ գեթ արի քեզ, վոր ինձ ուրացար,
 Վիրջը թե ետ եր, ել ուր մոգկացար,
 Քու սըրտի սերը ինձ ուր խոստացար:
 Սուր եշխիդ նիտը սըրտիս խըփեցիր,
 Քու սիրու կրակը ջանըս զըձեցիր
 Սըրտիս յարերուն մըհլամ չըքսեցիր,
 Երած ու խորված մըտեզ գցեցիր:
 Արի, սիրեկան, ինձ մե ուհամ արան,
 Երեսդ մի շուռ տա, մեկ մըտիկ արա,
 Խըղճա քու դուլին, մեկ անգամ արան,
 Քու քաղցր ձիւնին ինձ արժան արան:
 Թե աղաչանքս դուն չիս իմանա,
 Ել եսենց կինքին յես չիմ դիմանա,
 Գըլուխըս կուսպանիմ, Աստուծ գիտենա
 Կուլի քո սերը սըրտես վիրանա:

Սունդուկյանցը Թիֆլիզում ամենքից հարգված մարդ է յեղել թե հայ, թե վրացի և թե մյուս հասարակութունների մեջ: Նա հյուրասեր է յեղել, ընկերասեր և բարեկամասեր. մի անգամ նրա հետ ծանոթացողը, բարեկամացողը, վորտեղ ել վոր այդ լիներ, այլևս չի ուզեցի կտրել նրա հետ յուր հարաբերութունները, վորի հետևանքով և նա ստիպված է յեղել ունենալ ընդարձակ թղթակցութուն զանազան քաղաքներում և տեղերում հայերի և ոտարների մեջ: Դրա, այդ ընդարձակ թղթակցութեան, արգասիքը պետք է համարել նամակների այն անազին կույտը, վոր պահպանվել է նրա թղթերի մեջ:

Այդ կույտի մեջ մենք գտնում ենք, ի միջի այլոց, և մի քանի հայտնի ֆրանսիացիների նամակներ—Վիկտոր Հյուգոյի, Ալեքսանդր Դյումայի (վորդու) և Ֆրեդերիկ Մակլերի:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել Դյումայի նամակը ազատ թարգմանութեամբ, վորի մեջ պարզված են այն պատճառները, վորոնք արդելք են հանդիսացել «Պեսո»-յի բեմադրելուն Պարիզում:

98, Avenue de Villiers à Paris

Պարոն.

Յես հենց վոր ստացա, կարդացի այն ձեռագիրը, վոր Դուք պատիվ եք արել ինձ ուղարկելու: Իմ վրա վաղուց ի վեր պարտք կար պատասխանել Ձեզ, և յես այդ արած կը լինեյի, յեթե ստիպողաբար բացակայած չլինեյի:

Յես չեմ կարծում, վոր այն տիպարը, վոր Դուք դուրս եք բերել, այն տեսակներից լինի, վոր կարողանա հաջողութուն ունենալ մեր ֆրանսիական բեմի վրա: Մեր հասարակութունը, յերբ աֆիշների վրա նկատում է մի ոտար ծագում ունեցող, ոտար վարք ու բարք նկարագրող պիես, այդպիսիներից միշտ սպասում է տարորինակութուններ: Ձեր պարզ և շատ ընտանի տիպարը այդ նրան չի տալ և առաջ կը դա հուսախաբութուն, և յես պետք է ասեմ, վոր այդպես կը լինի վոչ միայն հանդիսականների համար, այլ և թատրոնի տեսուչների, վորոնք ճանաչում են նրանց տրամագրութունները, ուստի և չեն ուզենալ նրանց մատուցանել մի այնպիսի բան, վոր նրանք չեն պահանջում:

Սա մի փափուկ ու նուրբ կերակուր է, վոր կը լինի մեր Պարիզյան հանդիսականների զարգացած ախորժակի և բզացած քմքի համար անհամ ու անճաշակ—անա իմ կարծիքը: Բայց գուցե յես սխալվում եմ, և յես պատրաստ եմ, յեթե Դուք ցանկանում եք, ներկայացնել Ձեր պիեսը Պարիզի թատրոնների վարիչներից նրան, վորին դուք ցույց կը տաք ամեն տեսակ հանձնարարութուններով և բոլոր ազդեցութեամբ, վոր յես կարող եմ ունենալ: Սրա համար յես սպասում եմ միայն մի խոսք, հակառակ դեպքում յես հետ կուղարկեմ Ձեզ ձեռագիրը այն հասցեյով և ճանապարհով, վոր դուք ինձ կը հաղորդեք:

Ամենայն պատրաստակամութեամբ ծառայելու և ամենալավ համակրանքով մնում եմ՝

Ա. Դյումա:

Հայտնի յե, վոր Սունդուկյանցը ունեցել է մի ոտարազգի աշակերտուհի, որիորդ Ալեքսանդրա Պորֆիրյեֆնա Լեպեշինսկայա ազգանունով, վորի հետ նա միայն նամակազրությամբ է ծանոթացել և նամակներով էլ սովորեցրել է նրան հայոց լեզուն, այն էլ գրաբառը: Նրա թղթերի մեջ պահպանվել են այդ որիորդի մի քանի նամակները և լուսանկար պատկերները, վորոնք բոլորն էլ վկայում են որիորդի այն հարգանքի և անկեղծ սիրո մասին, վոր նա տածել է Սունդուկյանցի հանդեպ: Պատկերներից մեկի հետևը, որինակի համար, գրված է հետևյալ ընծայականը. «Առ ի սրտէ սիրելի և յարգելի Գարբիէլ Սունդուկեանցին ի յիշատակ անկեղծ բարեկամութեան և խորին համակրանքի 1885 թ. սեպտեմբեր 15. Горы-Горки»: Մյուսի վրա—«Սիրելի, թանկագին Գարբիէլ Սունդուկյանցին նրան սրտանց սիրող և հարգող Ա. Լեպեշինսկայայից»:

Յուր մասնավոր կյանքում Սունդուկյանցը յեղել է, ինչպիս ասում են, մի «զարդիմանդ», «լոթի» լավ մտքով, սրտաբաց և անկեղծ մարդ և սիրել է յուր պես լոթիներին և յեղբայրությունն է արել նրանց հետ: Թանգարանումս պահված է նրա «Քանդած ոջախի» մի տպագիր որինակը, նվիրված հայտնի Գեորգ Յեվանդուկյանին հետևյալ բնորոշ ընծայականով—«Գիորգի ջան, իմ գրածներու բարեկամներումեն «Քանդած ոջախի» մինձ բարեկամը դուն իս: Կա եստի մե քանի տիղիր, վորն որ դուն էլ են գրլիմեն հավնիլ իս ու հիմի էլ սրտումդ գալիս է. լավ իմանաս, վոր հավաճ ու սիրված խոսկիրը իմն էլ ստեմես է եկի:

Իհաս ես պատի թավազեն թող միր սրտիը ավելի կապե ու միր ախարութիը հաստատ պահե:

Ին լոթի ախպեր Գ. Սունդուկյանց:

18 21 83 թ.

Թանգարանում գտնվող «Մշակի» խմբագրության թղթերի մեջ պահված են Հովհաննես Տեր-Գրիգորյանի համառոտ հիշողությունները, վորից յերևում է, վոր Սունդուկյանցը հատկապես սիրել է իր մոտ հյուրերը ընդունել մտավոր գասից, վորոնց հետ նա սիրել է խոսել զանազան խնդիրների մասին, և կարգալ յուր գրվածները, թողնելով իր սիրելի կնոջը Սոփիային իրանց ազգականներին ընդունելու պարտականությունը:

Նույն հիշողություններից մենք իմանում ենք, վոր նա սովորությունն է ունեցել ամառը վաղ վերկենալ, առավոտյան ժամը 4 ին, և սառը ջրում լողանալուց հետո, սկսել պարապել, թելադրելով իր գրվածները իր մտերիմներին: Ճաշել է նա ժամը 2-ին և հանգստացել մինչև 5-ը, և այդ հանգստությունը յեղել է վոչ թե քնելը, այլ յուր սիրած հեղինակների ընթերցանությունը—Շիլլերի, Մոլիերի, Շեքսպիրի, Սկրիբի և մյուսների: Ժամը 5-ից նա դարձյալ պարապել է մինչև 11-ը, յերբ սովորությունն է ունեցել վերջացնել իր պարապումները և քնել:

Տոն որերին նա սովորաբար այցելել է ժողովրդական հանդեսները ու զրոսանքները, հաճախ լինելով Լոտու-Մեկիքյանի շքեղ այգում, Կրծանխի ճանապարհին, վորտեղ յուր բարեկամների՝ Գրիգոր Իզմիրյանի, Միքայել Տեր-Գրիգորյանի, Պետրոս Սիմոնյանի և մյուսների հետ նստելով պատը-

գամբում, լսել է ասիական յերաժշտության վարպետներին, նրանց յերգն ու խաղը, թառն ու ճիւղները, դուզուկն ու զուռնան, դահիրեն ու տիմպլիպիտոն, հանդիսատես լինելով համբարության վարպետներ որհնելու ծիսակատարության և այգախի ժողովրդական հանդեսներից քաղելով կամ ընդորինակելով յուր գրելիք պիյեսները համար տիպարներ ու տեսարաններ: Նա ինքն էլ ունեցել է յուր սեփական թառն ու ճիւղները, դահիրեն ու տիմպլիպիտոն, վորոնցից առաջին յերկուսը նա սովորած է յեղել համարությամբ նվագել: Այժմ նրա այդ յերաժշտական գործիքները ցուցադրված են Թանգարանում:

Թե վորքան նա հոգացել է յուր պիյեսներում դուրս բերած տիպարների ու նրանց ճշտության, կյանքից, իրականությունից առած լինելու մասին, ցույց է տալիս այն դեպքը, վոր պատահել է Յերևանում 1889 թ. մայիսի 17-ին:

Նա այդ թվին Յերևանում գտնվելով, Բազրադ Նավասարդյանի ընկերակցությամբ գնացել է Պողոս-Պետրոս յեկեղեցին, և յեկեղեցու գավթում Գայիանյան դպրոցի պատշգամբում տեսել է դպրոցի վարժուհիներից մեկին, որ. Կատարինե Աղամալյանին, զրույց անելիս յուր աշակերտուհիների հետ, վորոնք խուռն բազմությամբ շրջապատել էյին նրան և ուշադրությամբ լսում նրա ասածները:

Նա այնքան հափշտակվում է այդ տեսարանով և այնքան նմանցնում վարժուհուն յուր «Ամուսինների» Հեղինեյին, վոր հորդորում է յուր ընկերոջը վողջունել անծանոթ որիորդին և դրանով իրենց հարգանքը հայտնել հայ գաղափարական վարժուհիներին, վորոնց հավաքական տիպարը նա դուրս եր բերել յուր պիյեսի մեջ ի դեմս Հեղինեյի: Նա կամենում է անձամբ ներկայանալ որիորդին և աշակերտուհիներին և իր հրճվանքը արտահայտել նրանց, բայց հիվանդ լինելով, չի կարողանում յուր այդ ցանկությունը կատարել: Սակայն իր վարմունքը բացատրելու համար, նա Թիֆլիզից մի նամակ է գրում որիորդին, վորը իմանալով, թե ով է յեղել իրան վողջունողը, մի յերկտուն վոտանավոր է ձոնել իր այցետոմսի վրա և ուղարկել նրան:

Նա յուր այդ նամակում մեջ բերելով յուր «Ամուսինների» Հեղինեյի խոսքերը—«Այնտեղ (ուսումնարանում) յես իմ դերի մեջ եմ, այնտեղ յես զգում եմ, թե արդարև յես գործ եմ կատարում, յես իմ պաշտոնի վսեմությունը դասատան մեջ եմ միայն հասկանում»... և այլն: (Տես 2-րդ արարված, տեսիլ Գ), ավելացնում է «Տեսնելով Ձեզ, որիորդ, սուրբ յեկեղեցու գավթում, ուսումնարանի պաշգամբի վերա, շրջապատված Ձեր աշակերտուհիներով, յես մտաբերեցի Հեղինեյիս և հանկարծ ասացի կողքիս նստած բարեկամիս —«Ահա հայոց վարժուհին յուր նվիրական պաշտոնում, դուրս տանք այս որիորդին» և մենք Ձեզ վողջունեցինք, ստանալով Ձեր սիրալիք պատասխանը: Հավատացեք, որիորդ, վոր այն գեղեցիկ տեսարանը, վոր մեր աչքերին ներկայացրեց Սուրբ Պողոս-Պետրոսի յեկեղեցին, նրա գավթի մեջ Գայիանյան Որիորդաց ուսումնարանը Ձեզ և Ձեր աշակերտուհիների հետ միասին, անջնջելի գծերով փորագրվեցավ սրտիս մեջ և յես այդ տե-

սարանը յերբեք չեմ մոռանալ, քանի վոր կենդանի յեմ»:

Ավելորդ չենք համարում այստեղ մեջ բերել և որիորդի Սունգուկ-
յանցին ձոնած յերկտուն վոտանավորը—

Քու վաստակներով-սուր ակնարկներով
Գարձել ես մեծ մարդ, հայտնի յես հայինս.
Տվել ես դու կյանք քեզ հատուկ գրչով
Անշունչ, անկենդան աղքատիկ բեմին:

Այո, մեծ մարդ ես: Չունիմ թանկագին
Ակունք կամ վոսկի, քեզ նվեր բերեմ.
Բայց ջերմ համակրանք և այն սրտազին
Գարշապարիդ տակ դնել վատան եմ:

Հասարակաց գործունեության ասպարիզում թեև նա առաջնակարգ
դեր չի կատարել, բայց յուր ուժի և կարողության չափ գործակցել և ազ-
գային մարմիններին գրական, հրատարակչական, դպրոցական, բարեգործա-
կան և թատրոնական գործերում: Նա նամանավանդ և հատկապես սիրել և
ու յեռանդով գործակցել Հայոց Կովկասյան Բարեգործական և Դրամատի-
քական ընկերություններին, վորոնց գործադիր ու պատվավոր անդամն և
յեղել:

Յուր ուղղությամբ Սունգուկյանցը պատկանել և հայ հասարակու-
թյան ազգային ազատամիտ խավերին և աշխատակցել և «Մշակին», հա-
վանելով այն ուղղության, վոր բռնել եր այդ թերթը, սակայն նրա այդ
սերն ու աշխատակցությունը չպետք և հասկանալ այն նեղ կուսակցական
մտքով, վոր սովորաբար հասկացվել և այն ժամանակները, այլ լայն ընդ-
հանուր մտքով: Նա միշտ բարեկամ և մնացել ու հարաբերություն և ունե-
ցել ամենքի հետ և յերբեք չի կաշկանդել իրան կուսակցական նեղ հայացք-
ներով. նրա անձնական մտերիմ բարեկամներն են յեղել և Գրիգոր Արծրունին,
և Պետրոս Սիմոնյանցը, և Արգար Հովհաննիսյանը. և Գիվորգ Յեվանդուլյա-
նը, և Բագրատ Նավասարդյանը, և Հովհաննես Սպենդիարյանը և մյուս
տարբեր հայացքների և ուղղության տեր ազգային գործիչները: Նրա հա-
մար գոյություն չեն ունեցել «Մշակական», և «Նոր-Գարական» իրանց ա-
ռանձնահատուկ նեղ կուսակցական մտքով կերտված հորջորջումները:

Թե ինչպես և հասկացել Սունգուկյանցը յուր ժամանակվա կուսակ-
ցությունների հանգամանքները, այդ պարզ յերևում և այն վիճաբանու-
թյունից, վոր ծագել և նրա և «Մշակի» խմբագիր Գրիգոր Արծրունու մեջ
1892 թվին կաթողիկոսական ընտրության խնդրի առթիվ:

Արծրունին «Մշակի» 1892 թվի 25 համարում գետեղել եր մի նկա-
տողություն, վորի մեջ, հայտնելով, վոր «Մշակի» կուսակցության կաթողի-
կոսության թեկնածուների և թեմական պատգամավորների անուններն ար-
դեն հայտնի չեն, բայց հակառակ կուսակցությանը, — վոչ, նկատել եր,
վոր կողմնակի կերպով պարզվում և, վոր հակառակորդների թեմական պատ-
գամավորը Գ. Սունգուկյանցն և, և վոր այդ հանգամանքը պատիվ չի կա-
րող բերել մեր թատերագրողի պատկանելի հասակին, քանի վոր նա առաջ

պատկանելով «Մշակի» կուսակցության և այդ կուսակցության ձեռքով
ընտրված լինելով պատգամավոր Մողնու յեկեղեցում, այժմ հանկարծ թո-
ղել և մեր կուսակցությունը, հրաժարվել և Սրբիմյանի—Արիստակեսի թեկ-
նածությունից և միացել մեզ հակառակ կուսակցության հետ:

Սունգուկյանցին այնքան վիրավորել և այս նկատողությունը, վոր
նա գրել և մի հերքում և պահանջել որենքի հիմունքով գետեղել այդ «Մշա-
կի» հաջորդ 26 համարում, հերքում, վորի մեջ նա պարզորեն ասում և
վոր նախ՝ ինքը չի իմացել, թե ում ձեռքով և ընտրված պատգամավոր,
յերկրորդ՝ վոր յեթե ինքը ընտրված ել լիներ «Մշակի» կուսակցության
ձեռքով, այդ դեռ չեր նշանակել, վոր ինքը պարտական և հպատակվել այդ
կուսակցության պարագլխի բոլոր պահանջներին. յերրորդ՝ վոր յեթե ինքը
անգամ ընդհանրապես համակարծիք ել յեղած լիներ մշակականների ծրագ-
րին, այդ դեռ չեր նշանակել, վոր իրավունք չուներ մանրամասնություն-
ների մեջ շեղվել նրանից, և վոր ինքը անպայման Սրբիմյանական և, բայց
վորոչ նկատառումներով անժամանակ և համարում Արիստակես յեպիսկո-
պոսի թեկնածությունը: Այդ յուր համոզմունքն և, և վոչ վոք չի կարող
բռնանալ նրա այդպիսի համոզմունքի վրա, անգամ յեթե յեկեղեցական
պատգամավորների ընտրության ժամանակ Մշակականներից մի քանիսը
ձայն տված լինեն իրան:

Սունգուկյանցը սիրել և յուր ազգը, աշխատել և նրա գրականության
ու վերածնության համար, բայց չի ատել ու մյուս ազգերին, և իր գրվածք-
ների մեջ արծարծել և ընդհանուր մարդկային սկզբունքներ ու զաղափար-
ներ, պաշտպան հանդիսանալով ձնշվածներին, կարոտյալներին, արգար
վաստակով ապրողներին թե անհատների, թե դասակարգերի և թե առան-
ձին ազգերի վերաբերմամբ:

Յուր կտակի հավելվածում, վորի սեվագրությունը պահպանված և նրա
թղթերի մեջ, յուր կարողությունը յուր ընտանիքի անդամների մեջ հավա-
սարապես բաժանելուց և «Պեպո»-ն Բարեգործական ընկերության նվիրե-
լուց հետո, նա, պատվիրում և յուր ժառանգներին. Սիրել միմիանց
և ժողովուրդը, վոր ազգի և կրոնի ել պատկանելիս լինեն նրանք. «Лю-
бите друг друга и народ, каких бы национальностей и вероисповеданий
они ни были»:

Սունգուկյանցը մեր մյուս հեղինակների ու գրողների համեմատու-
թյամբ մի խոշոր առավելություն և ունեցել. նա նյութականապես ապա-
հովված մարդ և յեղել. նա համալսարանում սովորել և, իբրև կովկասյան սան
(Кавказский воспитанник) և յուր յերկարամյա անբիծ ծառայության ըն-
թացքում միշտ ստացել և վայելուչ սոճիկ—4420 ռ., և հավելում 1095 ռ.,
—ընդամենը 5515 ռ., իսկ պաշտոնից արձակվելուց հետո 2500 ռուբլի կեն-
սաթոշակ, վորով բնականապես նա կարող եր վայելուչ ապրուստ ունենալ
և մի բան ել խնայել ազազայի համար: Ասել և թե նա միշտ ազատ և յե-
ղել նյութականի հոգսերից և, շրջապատված լինելով սիրող ընտանիքով և
հատկապես սիրող ու խնամող կնոջ գուրգուրանքով, միջոց և ունեցել միշտ
խաղաղ և անվրդով ապրելու և յուր պաշտոնական պարագլուխներից ազատ
ժամանակը բոլորամասն նվիրելու իր սիրած գրական պարագլուխներին,

մի հանգամանք, վորից զրկված են յեղել մեր մյուս հեղինակներէից շատերը:

Այս այսպես լինելուց հետո, պետք էր և կարելի յեր նրա գրչից ակնկալել ավելի բեղմնավորութիւն, քան վոր իրոք նա արտագրել կամ ունեցել է: Նա յուր 56 տարվա գրական գործունեութեան ընթացքում ավել է միայն 10—12 թատերական գրվածք և ֆելյետոններ ի մի մի վրձրիկ ժողովածու, վոր բնականապես շատ քիչ է:

Արդ, ի՞նչն է յեղել զրա պատճառը:

Գուցէ հնարավոր լինի այդ մեկնել նրա քիչ ազատ ժամանակ ունենալու հանգամանքով և նրա սովորութեամբ՝ յերկար ու բարակ տքնելու յուր աշխատանքների վրա, անդադար փոփոխելով, ուղղումներ մտցնելով յուր գրվածքների մեջ և նորից ու նորից արտագրելով:

Այդ բոլորը, ի հարկէ, ճիշտ է, և անկասկած հասկացրել է նրա ստեղծագործական աշխատանքի թափը, բայց մեզ թվում է, վոր զրանք նրա գրչի բեղմնավորութեան պակասութեան գլխավոր պատճառները չեն: Մեր կարծիքով՝ զրա պատճառը պետք է վորոնել նրա ստեղծագործական ուժի շուտով թուլանալու ու սպառվելու մեջ. նրա գրելը հատկապես թիֆլիզի կենցաղի բնորոշ կողմերը քրքրելով, ի վիճակի չի յեղել բազմազան մտախնայելու գուրս կորզելու այդ կենցաղից և ման և յեկել պատել և մտախնայելու սահմանափակ շրջանում, ուստի՝ և բնականապես սպառելով կորզածը, այլևս չի գտել մի նոր իմաստալից մտախնայ, վոր կարողանար ստեղծագործութեան մի նոր բովանդակալից կառուցվածք առաջ բերել: Դրանով հենց մեր Սունդուկյանցը տարբերվել է ուսու Ոստրովսկուց, վորի տաղանտը նույն ասպարիզում, նոր մտախնայներ գտնելու և զրանց հիմունքով նոր հորինվածքներ ստեղծագործելու ասպարիզում, չափազանց զորեղ և յեղել, արտագրելով հետզհետե բազմաթիւ և բազմազան նոր յերկեր, մեկը մյուսից ավելի իմաստալից, ավելի բովանդակալից, ավելի գեղեցիկ և կենսական:

Սունդուկյանցի վերոհիշյալ նյութական ապահով վիճակին պետք է վերագրել և այն միտթարական հանգամանքը, վոր նա կարողացել է յուր իսկ կենդանութեան որերով յուր ձեռքով հրատարակել համարյա իր բոլոր յերկերը, և այն՝ մաքուր, փառավոր, լավ թղթի վրա, յուր ուղածի պես, յուր հակողութեամբ և յուր վերջնական սրբագրութեամբ, մի հանգամանք, վոր նույնպես վիճակված չի յեղել մեր գրողներից շատ-շատերին: Տպագրված են առանձին գրքերով նրա հետևյալ գրվածքները—

- Գիշերվան սաբրը խեր է, կատակերգութիւն մեկ արարվածով.
- Խաթաբալա, կատակերգութիւն չորս արարվածով.
- Ոսկան Պետրովիչը են-կինքումը, կատակ. 1 արարվածով:
- Յեզ ալն կամ Նոր Դիոգենես, կատակերգ. յերկու արարվածով.
- Ելի մեկ զոհ, կատակերգ. հինգ արարվածով.
- Պետո, կատակերգութիւն յերեք արարվածով.
- Քանդած Ոջախ, կատակերգութիւն յերեք արարվածով.
- Ամուսիններ, կատակերգութիւն չորս արարվածով.

Բաղնրսի Բողջա, կատակերգութիւն յերկու արարվածով.
Սեր և Ազատութիւն, կատակերգութիւն հինգ արարվածով.
Ժորժ Դանդեն (Թարգ.), կատակերգութիւն յերեք արարվածով.
Համալի մասլահաթները, ֆելյետոններ:


Այս գրվածքներից միայն մեկը—«Ամուսիններ» պիտան է, վոր ամբողջապես գրված է զրական լեզվով, և «Ելի մեկ զոհ», վորի մեջ յերկու գեր—Անանինը և Միքայելինը—նույնպես գրված են զրական լեզվով. մնացյալ բոլորը ամբողջապես գրված են թիֆլիզի բարբառով, վորով Սունդուկյանցը և խոսելու և գրելու մեծ հմտութիւն է ունեցել, սովորած լինելով այն մանկութեանից և կատարելագործված նրա գիտութեան մեջ յուր զրական գործունեութեան ընթացքում հետագայում:

Սակայն, վորքան վոր նա հմտութիւն է ցույց տվել բարբառի գիտութեան մեջ, նույն չափով հմտութիւն նա չի կարողացել ցուցադրել զրական լեզվի գիտութեան մեջ: Ով վոր ծայրի ծայր և քննական աչքով կարողացել է «Ամուսինները», նա համոզված կըլինի, վոր նրա զրական լեզուն աղքատ է, և հայաշունչ վոճերով ու զարձվածքներով, և բառամթերքով, և հայ հոգուն հարազատ շարամանութեամբ: Յեզ այդ շատ հասկանալի յեայն ժամանակ, յերբ բարբառը նրա ընտանեկան խոսակցութեան լեզուն է յեղել և նա այն յուր մոր կաթի հետ ծծել է յուր մեջ և մարմին ու արյուն է զարձրել, զրականը՝ ընդհակառակը, նա հետո յե սովորել յուր արդեն արբունքի հասակում, և այն էլ զրքերից ու զրական շրջաններից, առանց անմիջական շփումն ունենալու բուն հայ կենտրոններում ապրող ժողովրդի հետ և զրա հետևանքով առանց հնարավորութեան ունենալու հայ լեզվի հարազատ տարբերքով ճոխացնելու, հյութալից զարձնելու իր լեզուն: Այստեղ զեռ մենք չենք խոսում նրա լեզվի անկանոնութեան մասին, քերականական որենքների և կետադրական կանոնների գործածութեան թերութեան տեսակետից, վոր ամեն քայլափոխում աչքի յե զարնում նրա գրվածքներում:

Սունդուկյանցի գրվածքների լեզվական արժանավորութիւնը սակայն պետք է վորոնել ու գտնել վոչ նրա զրական լեզվի մեջ, այլ բարբառի մեջ, վոր նա իմացել է կատարելութեամբ և վորի գանձերը նա խնամքով ու մեծ հմտութեամբ հավաքել ու ամփոփել է յուր յերկերում ու ժառանգութիւն թողել յուր հետնորդներին: Ապագա ուսումնասիրողը կարող է ամենայն վստահութեամբ դիմել նրա գրվածքներին, իրրև առաջնակարգ աղբյուրի՝ թիֆլիզի բարբառը ուսումնասիրելու համար. նա իրոք կըգտնի նրանց մեջ այն բոլոր ճոխութիւնները և նրբութիւնները, վորոնք հատուկ են այդ բարբառին:

Սունդուկյանցը իրական դպրոցի ուղղութեան տեր մարդ է յեղել. նա հոգեբան է յեղել և գեղարվեստագետ—ստեղծագործող և, իրրև այդպիսին, մարմնավորել է յուր ձիրքը մի շարք գեղարվեստական գրվածքների մեջ, վորով մի կողմից հարստացրել է մայրենի զրականութիւնը, մյուս կողմից էլ կանոնավորել է հայ բնւր և նոր հորիզոններ բաց արել հետնորդների առաջ հայ թատերագրութեան ասպարիզում:

33





« Ազգային գրադարան



NL0388540

71.264

